


ՎԱՐԴԱԵՍ  
ՍՈՒՐԵՆՅԱՆՑ



40







А. Поповский.

ՄԱՆՅԱ ԴԱՅԱՐԱՄԵ

75 (ԿՀ. 525) (092 Սովորելի անց)

ՎԱՐԴԳԵՍ  
ՍՈՒՐԵՆԻԱՑ


A 3696

ՀԱՅԱԵՏՏԵՐԱՏ 1960 Ե Ր Ե Վ Ա Ն



Մանլա Ղազարյանի ուղարքես Սուբենյանցը մենագրությունը  
նվիրված է XIX դարի վերջի XX դարի սկզբի հայ անվանի նկարիչ-  
վարդպես Սուբենյանցի կլանքին ու ստեղծագործությանը:  
Աշխատությունը նպատակ ունի ընթերցողներին ժանոթացնե-  
լու անվանի արվեստագիտի բազմակողմանի նոտեղագործական  
կլանքին, բնորոշելով նրան որպես գեղանկարչի, դիբբ ձևավորողի,  
թատերական նկարչի, թարգմանչի, տեսաբանի, հասարակական  
գործչի և այլն:  
Դիբբը նվիրված է նկարչի ծննդյան 100-ամյակին:

МАНЯ МИХАЙЛОВНА КАЗАРЯН  
ВАРДГЕС СУРЕНИЯНЦ  
(На армянском языке)  
Армянское государственное издательство  
(Айпетрат), Ереван, 1960



## ԿՅԱՆՔԻ ՈՒՐՎԱԳԻՆԸ

Դեղանկարիչ, գիրք նկարազարդող, թատերական նկարիչ, արվեստի տեսարան, թարգմանիչ, ճարտարապետ, քանդակագործ՝ այդպիսին էր Վարդեն Սուրբնյանցը, այդ բազմաշնորհ արվեստագետը, որի թողած հարուստ ժառանգությունը մի նոր ավանդ էր հայ ժողովրդի մշակութի պատմության մեջ:

Վարդեն Սուրբնյանցը հանդես եկավ մի ժամանակաշրջանում, երբ հայ հասարակական միտքը նոր զարթոնք էր ապրում: Խաչատուր Աբովյանի ու Միքայել Նալբանդյանի սերմանած առաջավոր գաղափարները արդեն պարարտ հող էին գտել հայ մտավորականների նոր սերմոնի մոտ: Վարդեն Սուրբնյանցի ստեղծագործական տարիները համընկան մի ժամանակաշրջանի, երբ հանդես եկավ Շիրվանքագեն ու Թումանյանը, երբ հայ բեմը կարող էր հետագա սերունդների մոտ պարծենալ իրանկրկնելի Աղամյանով ու Աֆրանուշով, երբ հայ երաժշտական կուլտուրան դարերին թողեց Կոմիտասի ու Սպիհիարյանի անունները:

Այդ նույն ժամանակաշրջանում մեծ աշխուժություն էր տիրում նաև հայ կերպարվեստում: Այդ բնագավառի լավագույն ներկայացուցիչները՝ Գ. Բաշինջաղյանը, Հ. Շամշինյանը, Ա. Տեր-Մարուքյանը, Հմ. Հակոբյանը, Ե. Թաղենոսյանը և շատ ուրիշներ, իրենց նշանակալից ստեղծագործություններով

Ակզենավորեցին հայ կերպարվեստի ռեալիստական այն նոր ուղին, որով հետագայում ընթացան բազմաթիվ ստեղծագործողներ: Այդ վեհ և պատվավոր գործում իր լուման ներդրեց նաև Վարդգես Սուրենյանցը:

\* \* \*

Վարդգես Սուրենյանցը ծնվել է 1860 թվականի փետրվարին: Ախալցիայի գեղատեսիկ բնության մեջ անցան նրա մանկության տարիները: Ապագա նկարիչը դեռ լոթ տարեկան էր, երբ հայրը՝ Հակոբ ավագ քահանա Սուրենյանցը, նշանակում է ստանում Սիմֆերոպոլի Նա ափոսսանքով է թողնում Ախալցիան, նրա ուսումնարանները, որտեղ ինքը զանք չէր խնայել մատաղ սերնդի դաստիարակման համար: Ափոսսանքով է թողնում այն քաղաքը, որի ոսկերիշների նուրբ, մանրակրկիտ աշխատանքը, կանանց գմայինցոցի և ասեղնագործության նմուշները Փարիզի և Վիեննայի համաշխարհային արվեստահանդեսներում մի շարք անգամներ արժանացել էին բարձր գնահատականի: Այդ հաջողությունների մեջ իր մասնակցությունն էր ունեցել նաև Հակոբ Սուրենյանցը:

Սուրենյանցները, որպես արվեստասեր ընտանիք, Սիմֆերոպոլում շերմ ընդունելություն են գտնում ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու կողմից: Սուրեն Սուրենյանցը՝ Վարդգեսի մեծ եղբայրը, այդ տարիներին տուրում էր Թեոդոսիայի Խալիբյան վարժարանում, որի պատվավոր հոգաբարձում էր նաև անվանի նկարիչը:

1868 թ. Հովհաննես Այվազովսկին կատարում է ճանապարհորդություն դեպի Կովկաս՝ Վաղիկավկազ, Հյուսիսային Դաղստան, Թեմիր-խան Շուրա, Սովոսում, Թիֆլիս, Կովկասից բերած անմիջական տպավորությունների տակ նա բազմաթիվ դրույցներ է ունենում Հակոբ Սուրենյանցի հետ, որը հայրենասեր, հայերեն լեզվին, նրա բարբառներին և գրականությանը բաժանելով անձնավորություն էր: Այդ տարիներին փոքրիկ Վարդգեսը մասնակցում է դեպի Բախչիսարայ Հ. Այվազովսկու ընտանիքի կատարած ճանապարհորդությանը: Այնտեղ նրա վրա մեծ տպավորություն են թողնում գեղատեսիկ կիրճում գտնվող Գուրուկ-Առւ գետը, ավելի քան 350 տարվա պատմություն ունեցող Արդու Սախալ Գիրեյ խանի կառուցած պալատի արահաները, գեղեցիկ այգիները, մարմարյա շատրվանները և հատկապես նշանավոր արցոնքի շատրվանը, որից փոքրիկ Վարդգեսը հեռանալ չի կարողանում, այնքան ուժեղ է լինում նրա հիացմունքը:

Տանը նա հեշտությամբ մատիտով նկարում է այդ շատրվանը, հիաց-

մունքը պատճառելով մեծ ծովանկարչին, որն այդ փոքրիկ աշխատանքի մեջ տեսնում է ապագա նկարչի տաղանդը: Նկարի փոքրիկ հեղինակն արժանանում է իր մեծ բարեկամի գովասանքին՝ նվեր ստանալով առաջին յուղաներկերը:

1870 թ. Հակոբ Սուրենյանցը Վարդգեսին ուղարկում է Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում ուսանելու:

Վ. Սուրենյանցի ուսման առաջին տարիների մասին տեղեկություններ է հայտնում բանասեր Ե. Շահազիզը իր հիշողություններում: Նա մեծ համակրանքով է խոսում «ժանրաբարու», «անսահման համբերող», «բարի, պարեշտ և խոնարհ» նոր աշակերտի մասին, որին բնությունը օժտել էր սախափիսի շնորհըսկ... այդ նրա արտաքո կարգի նկարչական ընդունակություններն էին... բոլոր ժամանակ նստած նկարում էր ընկերներին, ուսուցիչներին և այլ պատկերներ, և այդ բոլորը զարմանալի նրբությամբ և նմանությամբ: Հետաքրքրական է մի գեղք, որը հավանաբար աղմուկ է բարձրացրել ճեմարանում, քանի որ այդ մասին հիշատակում են և՛ Վ. Սուրենյանցի բուլը, և՛ Ե. Շահազիզը: Խաչտուր աղա Լազարյանի հերթական այցելություններից մեկի ժամանակ Վ. Սուրենյանցը կատարում է նրան պատկերող մի գծանկար՝ «տգեղ», հայկական մեծ քթով, ինչպիսին եղել է բնորդն իրականում: Այդ աստիճան նմանությունը ֆրանսերեն լեզվի ուսուցչի կողմից դիտվում է որպես ծաղր, և նրա բարձրացրած աղմուկի հետևանքով նկարի հեղինակը պատժի է ենթարկվում:

Լազարյան ճեմարանում Վ. Սուրենյանցը մեծ սիրով է ուսումնասիրում հատկապես լեզուները, ընդ որում հայոց լեզում՝ անվանի բանաստեղծ Սմբատ Շահազիզի, իսկ պարսկերեն՝ նշանավոր հրապարակախոս Ստ. Նազարյանի ղեկավարությամբ: Անկասկած Վ. Սուրենյանցի նկարչական ընդունակությունները խրախուսվում էին Ստ. Նազարյանի կողմից, որը նույնական նկարչական ծիրք ուներ և դեռևս ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին ընդորինակություններ էր կատարել մի շարք գեղանկարչական ստեղծագործություններից:

1875 թ. հունիսի 13-ին Լազարյան ճեմարանի մանկավարժական խորհուրդը, նկատի ունենալով Վարդգես Սուրենյանցի նկարչական ընդունակությունները, որոշում է նրան տալ թոշակ և տեղավորել այն ժամանակ ուսանելու տարիներին ընդորինակություններ էր կատարել մի շարք գեղանկարչական ստեղծագործություններից:

---

Ե. Շահազիզ, «Նկարիչ Վարդգես Սուրենյանցը» (իմ աշակերտական հուշերից)՝ «Էլմիածին», 1949 թ. № 5, էջ 30—33:

Նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնաբանում:

XIX դարի 70-ական թվականներն այդ ուսումնարանի ժաղկման տարիներն էին, երբ նա գաղափարապես կապվեց ժամանակի առաջավոր ուսականական դպրոցի խոշոր ներկայացուցիչների ընկերության՝ Պերեգվիժնիկների<sup>1</sup> հետ։ Ուսումնարանի շենքում կազմակերպվում էին նրանց համատեղ գեղարվեստական ցուցահանդեսները։ Այդ տարիներին ուսումնարան է գալիս նաև պատանի Վարդգես Սուրենյանցը։ Փայլուն կերպով հանձնելով սահմանված ընդունելության քննությունները՝ նա ընդունվում է ճարտարապետական ֆակուլտետի նախապատրաստական դասարանը։

Լազարյան ճեմարանում անցած տարրական նկարչությունից հետո Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը մի նոր գեղարվեստական աշխարհ էր Սուրենյանցի համար։ Մաթեմատիկական առարկաների, ֆրամսերեն լեզվի, աշխարհագրության հետ միասին նա մեծ ոգևորությամբ է լսում ժամանակի նշանավոր ճարտարապետներից մեկի՝ Մ. Դ. Թիկովսկու զրույցները արվեստի հուշարձանների մասին, կատարում է գրադարանների, շքամուտքերի զանազան նախագծեր և այդ ամենի հետ գեղանկարչության դասեր վ ստանում ուսու նշանավոր նկարիչ ի. Մ. Պրյանիշնիկովից, գծանկարը՝ Ե. Ս. Սորոկինից, իսկ շաբաթը մեկ անգամ էլ մասնակցում է Լ. Վ. Դալի ակվարելային նկարչության դասերին։

Զանասիրաբար կատարելով առաջին տարիվա առաջադրանքները՝ Վ. Սուրենյանցը փոխադրվում է երկրորդ դասարան։ 1877—78 ուսումնական տարում ճարտարապետական ֆակուլտետի երկրորդ դասարանը բաժանվում է 3 կարգի՝ տարիվա ծրագիրն ավելի հիմնավոր անցնելու և յուրացնելու նպատակով՝ Վ. Սուրենյանցն ընկնծվմ է երկրորդ կարգը, ուր տարվա ընթացքում կատարում է հունական, հոռմեական և իտալական օրինակելի շենքերի գետալների ընդորինակումներ, ինչպես նաև ուսումնասիրում է ճարտարապետության տեսություն։ Ե. Ս. Սորոկինի արվեստանոցում Սուրենյանցը գծանկարչություններից ընդորինակումներ է կատարում հին հունական և հոռմեական քանդակներից։ Այդ տարիներին ուսումնարանի նրա ընկերներն էին, հետագայում անվանի ուսու նկարիչներ, Վ. Սիմովը, Ի. Ակիտանը, Մ. Կորովինը, Ն. Կասատկինը, Ն. Զեխովը և ուրիշներ։ Վ. Սուրենյանցի ուսանողական տարիներից մեզ է հասել միայն 1878 թ. կատարած

<sup>1</sup> Եարժական Գեղարվեստական Ցուցահանդեսների Ընկերություն։

մի կնոջ դիմանկար, որը հավանորեն կատարված է լուսանկարից և գեղարվեստական առանձին արժեք չի ներկայացնում:

Թայց ահա, 1879 թ. մայիսի 31-ին վախճանվում է Ստ. Նազարյանը: «Մշակիր թղթակիցը Մոսկվայից գրած իր հոդվածում նկարագրելով մեծ հրապարակախոսի թաղման արարողությունը՝ գրում է.

«Վերը, տեղիս երեսփոխան պ. Փանելյանցի հրավիրանոք, որը Նազարյանի մտերիմ բարեկամներից մեկն է և որ այսօր հանձն էր առել տնօրինել թաղման հանդեսը, հանդիսականները դիմեցին դեպի սեղանատուն: Սա մի դաշինք է, որի պատերից բացի հայ թագավորների և կաթողիկոսների պատկերներից, կախ էր արված այդ օրը հանգուցյալ Նազարյանի մեծադիր պատկերը, շրջապատված ծաղկյա պսակով»: Ապա ծանոթության կարգով ավելացնում է. «Նազարյանի այս պատկերը, որպես և նրա գիպսե դիմակը (Гипсовая маска), որը շատ կարևոր է ճիշտ արձան ունենալու համար, մեր տաղանդավոր երիտասարդ նկարիլ Վ. Սուրբնյանցի աշխատությունն են»:

Դա առաջին հիշատակությունն է Վ. Սուրբնյանցի մասին, որին հանդիպում ենք մամուլում, ինչպես նաև նրան տրված հրապարակային առաջին գնահատականը:

Մակայն այդ օրերին Վ. Սուրբնյանցի համար ապագան անորոշ էր, քանի որ այդ ապագան տնօրինող հայ բուրժուազիայի համար արժեք չէր ներկայացնում տաղմանդի առկայությունը շնորհալի պատանու մոտ:

1878 թ. հունվարի 13-ին ճեմարանի տեսուչ Ն. Դելանովը հիշեցնում է Ս. Արամելեկ-Լազարեկին Վ. Սուրբնյանցի գեղարվեստական կրթությունը շարունակելու և Լազարյան ճեմարանի կողմից նրա թոշակը երկարածելու մասին:

1878 թ. հունվարի 18-ին Ս. Արամելեկ-Լազարեկը այդ հիշեցմանը պատասխանում է.

«1875 թ. հոգեստ սան Վարդգես Սուրբնյանցին որոշված էր տալ տարին 300 ռ. կազարյան ճեմարանի գումարներից և արտոնություն՝ օգտվելու իր ընտրած այլ հաստատության կրթությունից, որի մասին հայտնված էր ինձ 1875 թ. հոկտեմբեր ամսին: Այն ժամանակ ես ինձ իրավասու շհամարեցի հականառելու մանկավարժական խորհրդի այդպիսի որոշման անճշտությանը:

Իսկ այժմ, ձեր հարցման առթիվ՝ տրոշել վերոհիշյալ օֆանդակության ժամկետը, ես գտնում եմ, որ ոչ միայն իրավացի է, այլ նույնիսկ անհրաժեշտ, որպեսզի սույն 1878 թվից դադարեցվի այն, որպես ճեմարանի կանոնադրությանը անհամապատասխան, և թույլ տրվի Վարդգես Սուրբնյան-

ցին օգտվել նույն թոշակից Լազարյան ճեմարանում, եթե նա այդ ցանկանա: Հայտնելով ձեզ այդ հարցի առթիվ իմ այսպիսի կարծիքի մասին, ես գտնուած եմ, որ իրավացի կլինի, եթե մանկավարժական խորհուրդը այժմ ձեռնարկեր նրա վերանայումը և հաներ որոշում՝ իմ կարծիքին համապատասխան:

Այդ օրերին Վ. Սուրենյանցի հայրը որոշում է որդուն ուղարկել արտասահման՝ Շտուտգարտի, Յուլիսի կամ Մյունխենի պոլիտեխնիկական բարձրագույն հաստատություններում սովորելու, նյութական կողմը կապելով մեծ որդու՝ բժիշկ Սուրենի հետ:

1879 թ. հոկտեմբերի 10-ին, Մասկվայի գեղարվեստական ընկերության քարտուղարի ստորագրությամբ, Վ. Սուրենյանցին տրվում է մի տեղեկանք, որ նա 1876—77 և 1877—78 թթ. սովորել է Մասկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում, արվեստի գծով՝ գիպսե գլուխների դասարանում, գիտելիքների գծով՝ Յ-րդ դասարանում և զբաղվել է ճարտարապետությամբ: Այդ վկայականով էլ Սուրենյանցը 1879 թ. հովհանն իր ավագ եղբոր ընտանիքի հետ մեկնում է Վիեննա, ապա՝ Մյունխեն:

Իր մտերիմ ընկերներից մեկին՝ Գրիգոր Խաչաթյանին գրած մի նամակից (1879 թ. օգոստոսի 10) պարզվում է, որ հասնելով Վիեննա, Սուրենյանցը անմիջապես հետաքրքրվում է տեղի գեղարվեստի ակադեմիայի ընդունելության պայմաններով, սակայն դեռ որոշում է հետևել հոր խորհրդին և ընդունվել որևէ պոլիտեխնիկական բարձրագույն հաստատություն:

Վ. Սուրենյանցի կրանքի մյունխենյան շրջանի մասին տեղեկություններն անշափ սուլ են: Պահպանվել են չորս ալբոմ գծանկարներով, չորս դրամներկ աշխատանք, վերջերս հայտնաբերված մի բնորդի դիմանկար, զանազան ոճի ճարտարապետական սյուների գծագրումներ և մի քանի ընդորինակություններ: Հայտնի է, որ Վ. Սուրենյանցը սկզբում սովորել է Մյունխենի բարձրագույն Պոլիտեխնիկական դպրոցի ճարտարապետական ֆակուլտետում: Ուսման երկորդ տարում՝ 1880 թվականից, նա թողնում է այն և ընդունվուած Գեղարվեստի ակադեմիա, ուր սովորում է գերմանացի նկարիչ-ժանրիստ Օտտոն Զեյտցի արվեստանոցում:

Արվեստագետի քույրը՝ Յու. Սուրենյանցը, նկարչի ստեղծագործությունների 1931 թ. ցուցահանդեսի կատալոգում հիշատակում է, որ Վ. Սուրենյանցը սովորել է Կառուբախի մոտ (խոսքը վերաբերվում է Ֆրից (Ֆրեդերիկ) Ավգուստ Ֆոն Կառուբախին), որն իրոք այդ տարիներին դասավանդում էր Մյունխենի Գեղարվեստի ակադեմիայում, բայց վերջերս հայտնաբերված

մի ուշադրավ փաստաթուղթ առավել լուսաբանում է այդ հարցը: Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանի ձեռագրային բաժնի Ն. Պ. Սորկոյի ֆոնդում պահպանվել է մի բացիկ նամակ Վ. Սուլբենյանցի ձեռագիր տեքստով, ուր նա հավանաբար պատասխանելով ն. Պ. Սորկոյի հարցերին՝ գրում է:

«Ծնվ. 1860 թ. Արխալցխայում (Թիֆլ. նահ.), սկզբնական կրթությունստացել եմ Արևելյան լեզուների լազարյան ճեմարանում՝ Մոսկվայում, որտեղ 1876 թ. նույն ճեմարանի միջոցներով ընդունվել եմ Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը: 1879 թ. մեկնեցի արտասահման և ուսումնասիրում էի երրեմն ճարտարապետություն, երբեմն գեղանկարչություն՝ Գերմանիայում և Խոտալիայում: 1880 թ. հիմնավոր անցագ գեղանկարչության և մինչև 1885 թ. աշխատում էի Օտտոն Զելտցի մոտ՝ Մյունիսինի կայսերական Գեղարվեստի ակադեմիայում, 1886 թ. ստեղծագործական նպատակով նախաձեռնել եմ մի շարժանապարհորդություններ Պարսկաստան և Անդրկովկաս և 1892 թ. բնակություն եմ հաստատել Մոսկվայում»:

Օտտոն Զելտցն իր ուսանողների մեջ սեր էր առաջացնում դեպի կենցաղային նկարչությունը, բնության ուսումնասիրությունը, միաժամանակ ստիպելով նրանց ուսումնասիրել և բնօրինակումներ կատարել գեղարվեստի անցյալի վարպետների ստեղծագործություններից, որոնցով այնքան հարուստ էր Մյունիսինի Պինակոտեկան (Հին արվեստի թանգարան): Վ. Սուլբենյանցի այդ տարիների ալրումներում պահպանվել են թերթիկներ, որոնք պատկերում են Ռեմբրանդտի «Եսրունի Հորանդացու դիմանկարը», Ռուբենսի «Ահեղ դատաստանը», «Քնած Դիանան» նկարից կենտրոնական դետալը, ֆլամանդացի նկարից Ալդրիան Բրուուրի, գերմանացի նկարից Ֆրից ֆոն Ուգեի ստեղծագործություններից զանազան ֆիգուրաներ: Պատանի նկարչին հետաքրքրել են նաև իսպանացի նշանավոր նկարից Մարյանո Ֆորտունիի, ֆրանսիացի նկարիչ-մամկավարժ Բենժամեն Կոնստանի արևելյան կերպարները: Առանձին փոքր կտավների վրա նաև ընդօրինակումներ է կատարել նաև Վան-Դելիկից և Մուրիլլոյից: Դրանք կատարված են յուղաներկով, գրչով կամ մատիտով: Ընդօրինակումներում հեղինակը հիմնական ուշադրություն է դարձնում բույսի և մտվերի հարցերին, գոճային ընդհանուր հարաբերություններին, տարագների ճիշտ վերաբերադրմանը:

1 Դ. Պ. Սորկոն մտադիր էր հրատարակել ուսանկարիների բառարան, որի միայնական կամ Վան-Դելիկից և Մուրիլլոյից: Դրանք կատարված են յուղաներկով, գրչով կամ մատիտով: Ընդօրինակումներում հեղինակը հիմնական ուշադրություն է դարձնում բույսի և մտվերի հարցերին, գոճային ընդհանուր հարաբերություններին, տարագների ճիշտ վերաբերադրմանը:

իր նյութական վիճակն ապահովելու համար Վ. Սուրենյանցը ստիպված է լինում Մյունիստիկ հայոց և ոռուաց լեզվի մասնավոր դասեր տալ: Այդ նույն ժամանակ նա կատարում է մի խոշոր կոմպոզիցիոն աշխատանք հայկական կյանքից, որի անվանումն անգամ մեզ չի հասել, սակայն հայտնի է, որ ուսանողական ցուցահանդեսից այն գնվել է 800 մարկով: Դա խոշոր բարոյական օգնություն էր, որը ոգևորում է պատանի ստեղծագործողին և առիթ հանդիսանում վերջնականապես թողնելու ճարտարապետական ֆակուտետը: Վ. Սուրենյանցի այդ քայլն անակնկալ հարված էր նրա համար: Բուրժուական սահմանափակ հասկցողությունը նկարչի անապահով վիճակի մասին ստիպում է նրան քազմից գրել որդում ետ կանգնելու այդ քայլից, սակայն Վարդգես Սուրենյանցի համար կյանքում այլևս այլ նպատակ չկար: Եթև նկարի եմ և շեմ ուզում ընկնել երկու քանի ետքից: Ես դիելետանու շկամի լինել նկարչության մեջ: Վերջապես դեպի ճարտարապետությունը շունեմ այն համակրությունը, այն գտումը, որ կարողանամ ինձ համար (ստեղծված) դժվարությունները հաղթելով ավարտել: Հայտարարում է նա Գ. Խալաթյանին, երբ վերջինս, ճանապարհորդելով Ելրոպա, Մյունիստիկ առաջին խոկ օրը լինում է Վարդգես Սուրենյանցի մոտ և հոր հանձնարարությամբ համոզում է նրան թողնել նկարչությունը իր զրուցների արդյունքների մասին Գ. Խալաթյանը գրում է իր եղբարը՝ Մուկվա:

Այդ նամակից պարզվում է նաև, որ առաջին նկարի անսպասելի հաջողություններից հետո Վարդգես Սուրենյանցը ոգևորված զանազան փայլում գաղափարներով ապագայի մասին՝ նախաճեռուում է երկրորդ աշխատանքը արևելյան կյանքից, մտադիր լինելով նրա վաճառքից ստացված գումարով ճանապարհորդել Կովկաս, հատկապես Հայաստան և ավելի մոտիկից ժամութանալ հայ ժողովրդի կյանքին: Այդ զրուցների ժամանակ Գ. Խալաթյանն ինքն էլ համոզվում է, որ Վարդգեսի ընտրած ուղին ճիշտ է, որովհետև նա ունիուտ է արևելյան ոճին—արևելյան կյանքը, արևելքի զգեստները, կարասիքը, նիստ ու կացը, արևելյան տիպերը, կողորդիտը—ինչպես երևում է ուսումնասիրել է նաև ահա մի ասպարեզ, մի շրջան, որ շատ ասկավ ժանոթ է այստեղի նկարիչներին և որը իր ձեռքում մի տեսակ գաղտնիք է? Ըստ իսկ ցանկանալու է միայն, որ նա իր նկարչության մեջ առաջանա, անուն հաստատի: Գ. Խալաթյանի այն առարկությանը, որ ավարտելով Մյունիստիկ Գեղարվեստի ակադեմիան նա ճնարավորություն չի ունենա Ռուսաստանում որևէ տեղ աշխատամիք ընդունվելու, Վ. Սուրենյանցը պատասխանում է, որ եթե ինքը ցանկանա որևէ աստիճան ստանալ, ապա կարող է իր դիպլոմային աշխատանքը ներկայացնել Պետերբուրգի Գեղարվեստի ակա-

դեմիային, որը նրան առաջին կամ երկրորդ կարգի նկարչի կոչում կշնորհի, իսկ դա իր հետ կրերի նաև պաշտոնական իրավունքները: Այդ կարգի լավատեսական հեռանկարներով էր տարրված մի երիտասարդը, որն այդ օրերին նստած էր առանց կոպեկի, 250 մարկից ավելի պարտքով, Ակադեմիայի լաբարանները հաճախելու վարձը ամիսներով շվճարած: Արհամարհելով ամեն տեսակ դժվարություններ՝ նա ցերեկները լինում է ակադեմիայում, իսկ օրվա երկրորդ կեսը նվիրում է ձեռնարկած նոր նկարի ավարտմանը: Այս երկրորդ մեծ աշխատանքի վաճառքից ստացած գումարով Վ. Սուրենյանցը հնարավորություն է ունենում հետևել Օտտոն Զեյտցի խորհրդադներին և ճանապարհորդել Խտալիա: Ճանապարհորդությունը տևում է ավելի քան 8 ամիս՝ 1881 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր: Այդ ճանապարհորդության ժամանակ նա լինում է Միլանում, Ֆլորենցիայում, Հռոմում, որոշ ժամանակ ապրում է Վենետիկի և Ղազար կղզում, որտեղ նրան ամենից շատ հրապուրում են Մխիթարյանների հարուստ գրադարանը և մասնավորապես՝ այնտեղ պահպանվող հայկական միջնադարյան ձեռագրերը<sup>1</sup>: Հայկական մանրանկարներից Վ. Սուրենյանցի կատարած ընդորինակումները մեզ չեն հասել, սակայն հայտնի է, որ նա ընդորինակել է մի շարք մանրանկարչական աշխատանքներ, բազմաթիվ զարդարանքներ և սկզբնաղարդեր, որոնք նա խնամքով պահպանել և մի շարք այլ աշխատանքների հետ միասին ցուցադրել է 1898 թ. Պատմական նկարիների ընկերության Յ-րդ ցուցահանդեսում: Խտալիա կատարոծ ճանապարհորդությունից Վ. Սուրենյանցը իր հետ բերում է ճանապարհաթիվ շրաներկ էտյուդներ, որոնց որոշ մասը պահպանվել է: Դրանցից են՝ «Հոռոմի մի ամսկում», «Վենետիկի հուշարձանը», «Վենետիկի մեծ ջրանցքը»: Այդ էտյուդներում հետաքրքրիր են լուծված հեռանկարի, լուսի, օդի պատկերման հետ կապված զանազան հարցերը, գեղեցիկ է վերարտադրված տաք օրվա կոլորիտը, հմտությամբ օգտագործված են զրաներկի նուրբ անցումները:

Ճանապարհորդությունից բերած էտյուդները Վ. Սուրենյանցը ցուցադրում է ուսանողական հերթական ցուցահանդեսներում՝ արժանանալով մասնագետների բարձր գնահատականին: Այդ հաջողությունները սակայն շատ քիչ են բարելավում նրա նյութական վիճակը: Ընկերների խորհրդով և դրաստունների միջնորդությամբ նա սկսում է գժանկարներ և ժաղացներ կա-

<sup>1</sup> Սուրենյանցի գրադարանի գրքերից պահպանվել է Ղեղեգ Ալիշանի և Շիրակը աշխատաթթյունը, հրատարակված 1881 թ., որի վրա հեղինակը գրել է՝ «Առ աղնիզ պարզն Վարդգես Սուրենյանց»:

տարել Մյունիստում հրատարակվող նշանավոր «Fligende Blätter» («Թռուցիկ լրագիր») թերթի համար: Հնարավորություն չենք ունեցել այդ աշխատանքները տեսնելու, սակայն անկասկած է, որ նրանք նպաստել են Սուրբնյանցին, կյանքի այս կամ այն երևույթները ավելի խոր և ուշադիր ուսումնասիրելու: Մյունիստում կատարած վ. Սուրբնյանցի գունանկարչական աշխատանքներից վերջերս հայտնարերվեց «Սերովի բնորդի դիմանկարը» (Հայաստանի Պետական Պատկերասրահ), որն աշխից վերևում ունի նկարչի հայերեն ստորագրությունը և կատարման 1883 թվականը: Դիմանկարը հետաքրքիր է իր ձևերի պնդությամբ և հատկապես կերպարի ներքին դրամատիզմով, որը հանգստության արտաքին քողի տակ հանդես փալով՝ բնորոշ է վ. Սուրբնյանցի հետագա բորոր ստեղծագործություններին: Նկարի ընդհանուր կոլորիտը ակադեմիական գորշ շագանակագույնն է, սակայն այդ շագանակագույնի հետ առկայծող արծաթավուն տոներն իրենց մեջ կրում են վ. Սուրբնյանցի հետագա ողջ արվեստին հատուկ հանգիստ, սադափափափայլ կոլորիտի նախադրյալները:

Վ. Սուրբնյանցի Մյունիստում շրջանի մասին հայտնի է նաև, որ նա մտերիմ է եղել ախալցիսացի երիտասարդ կուն Մութաֆյանի հետ, որի դիմանկարը (գծանկար), կատարված Մյունիստում 1883 թ., պահպանվում է Հայաստանի Պետական Պատկերասրահում: Վ. Սուրբնյանցի հետ, այդ տարիներին, Մյունիստում Գեղարվեստի ակադեմիայում սովորել է նաև հոգնարացի ապագա նշանավոր նկարիչ, ծագումով հայ, Սիմոն Հոլոշին, իսկ 1883—1885 թթ. դեպի արևոտասահման կատարած ճանապարհորդության ժամանակ Մյունիստում է լինում և բարեկամանում վ. Սուրբնյանցի հետ նաև ուսունակարիչ Ա. Դ. Կիվշենկոն: Իրեն հիշատակ այդ լավագույն օրերի՝ Ա. Կիվշենկոն նրան է նվիրում մի բնանկար (Հայաստանի Պետական Պատկերասրահ), վրան մակարդակած՝ «Ե. Յ. Սուրենյանցի պատճենը»:

Հաջողությամբ ավարտելով Մյունիստում Գեղարվեստի ակադեմիան՝ 1885 թ. փետրվարին Վարդգես Սուրբնյանցը վերադառնում է Մոսկվա և ձեռնարկում հոր կիսանդրու պատրաստմանը, որը դրվում է նրա շիրիմի վրա: Այդ օրերին Կայսերական հնագիտական ընկերության Արևելյան բաժնում ուժի մեջ ըունենք:

<sup>1</sup> Մոսկվայի վ. ի. կենտրոնի անվան հանրապետական գրադարանում պահպանվել են այդ թերթի մինչև 1879 թ. համարները, իսկ կենտրոնագի Սալտիկով-Շեղրինի անվան հանրային գրադարանում հնարավոր է եղել թերթել 1883—1884 թթ. համարները: Թերեւա արևելյան թեմաներով որոշ աշխատանքներ վ. Սուրբնյանցին են, սակայն փաստեր չունենալով այն հաստատելու ոչ մի հիմք չունենք:

թի հանձնարարությամբ մի արշավախումբ է սւլկորվում դեպի Պարսկաստան, որը ղեկավարում էր նշանավոր ռուս իրանագետ, Պետրովովրդի համալսարանի պրոֆեսոր Վալենտին Ալեքսեևիչ Ժուկովսկին: Նա մտադիր էր ուսումնասիրել հատկապես Թեհրանի, Սպահանի, Շիրազի և Մազանդարանի շրջանների պարսկական բարբառները, պարսկական գրականության նմուշները, ժողովրդական բանահյուսությունը և ազգագրությունը: 1885 թ. մայիսին Վ. Սուրեննանցը, Էքսպեդիցիայի հետ, որպես նկարիչ մեկնում է Պարսկաստան: Այդ ճանապարհորդության ժամանակ նա առաջին անգամ լինում է իր երազած Հայաստանում, տեսնում է նրա ավերակ ու կանգում հուշարձանները, հիմնում այն բնաշխարհով, որը կախարդական հեթիքի նման դարձել էր պատանի արթեստագետի երազանքը: Նա տեսնում է Արարատը, Արաքսը, համարյա ավերակ դարձած Հին Ջուղան, լինում է Թավրիզում, Զենջանում, Թեհրանում: 1885 թ. հունիսին էքսպեդիցիան հասնում է Սպահան, ուր Վ. Սուրեննանցը կատարում է հտյուղներ՝ հատկապես կանգ առնելով պատմական ճարտարապետական կոթողների վրա: Այդ հտյուղների թվում են եղել «Իման Ջադի սրբի գերեզմանը», «Սուլթան Հուսեյն Շահի մեզլիսի ներքին տեսքը Սպահանում» և այլ աշխատանքներ, որոնց գգալի մասը մեզ չի հասել: 1885 թվականն անցկացնելով Սպահանում, 1886 թ. գարնանը էքսպեդիցիան ուղևորվում է դեպի հարավ՝ Շիրազ, ապա Մազանդարանի ոստանի Սարի կենտրոնը: Մեկ տարուց ավելի տևող այդ ճանապարհորդության ընթացքում պրոֆ. Վ. Ա. Ժուկովսկին բավականին նյութ է հավաքում, որը հետագայում ի մի է բերում և հրապարակում, իսկ Վ. Սուրեննանցն իր հետ բերում է մի քանի տասնյակ էտյուղներ:

Պարսկաստան կատարած ճանապարհորդությունից հետո, 1889 թ. սեպտեմբերին, Վ. Սուրեննանցը հրավիրվում է էջմիածին՝ Գևորգյան ճեմարանը, որպես նկարչության ուսուցիչ: Այդ հրավերն իրականացվում է բանասեղծ Հովհաննիսյանի օժանդակությամբ, որն այդ ժամանակ ճեմարանում դասավանդում էր ուսուցած լեզու և ընթանություն մատենագրության պատմություն:

1890 թ. Վ. Սուրեննանցը հասնում է էջմիածին և ստանձնում նկարչության, ինչպես նաև ընդհանուր արթեստի պատմության առարկաների դասավանդումը, որը նրան անհրաժեշտ էր նյութական ապահովության համար, իսկ մյուս կողմից նկարչին հրապուրում էին նաև արթեստի պատմության վերաբերյալ դասախոսություններ, որոնք հնարավորություն էին ստեղծում այդ ընապավառում ունեցած հարուստ գիտելիքները մատաղ սերմդին հաղորդելու և նրանց մեջ սեր առաջացնելու դեպի արթեստը:

Էջմիածնում Վ. Սուրենյանցը մեծ ոգևորությամբ ձեռնամուխ է լինում նաև վանքի հարուստ գրադարանում՝ պահպանվող ձեռագրերի ուսումնասիր-ման, ընդօրինակություններ է կատարում բազմաթիվ ձեռագրերի մանրանկարներից, որոնք նա ցուցադրում է 1898 թ. Մուլվայում բացված Պատմական նկարիչների ընկերության Յ-րդ ցուցահանդեսում:

Էջմիածնում եղած տարիներին Վ. Սուրենյանցը ընդունում է նաև Մակար կաթողիկոսի առաջարկը մայր տաճարի ներսի վերամրուգումը՝ \*կատարելու, որի համար նա ընդօրինակում է տաճարի ներսի որմնանկարները, թվով 130 էր: Նրանցից պահպանվել է միայն մեկ էջ, որտեղ զարդանկարների գումային ճիշտ համարությունը, որմնանկարների միայն մի մասի կովաղողիցիոն կառուցման վերարտադրությունն անգամ օգնում են էջմիածնի եկեղեցին նկարազարդող Հովնաթանյան նկարիչների արվեստի հությունը պարզաբանելուն:

Վ. Սուրենյանցին հանձնարարվում է նաև վանքի Խցերի և ապագա վեհարանի համար նախագծի պատրաստումը, սակայն էջմիածնին է գալիս ճարտարապետ Ֆ. Շտերնը և այդ նախագիծը կաթողիկոսը հանձնարարում է նրան, որն օտարին հասուլ անտարրելությամբ իրեն ներկայացված նախագծով հիմնական վերափոխման է ենթարկում հայ ժողովրդի այդ կարևոր ճարտարապետական հովարձանը: Վ. Սուրենյանցի հետագա հովանական պարզ է դաշտում, թե որքան մեծ վիշտ է պատճառել այդ հանգամանքը նրան:

Գալով էջմիածնին Սուրենյանցը մեծ խոստումներ է ստանում հոգևոր իշխանությունից, ինչպես ինքն է այդ մասին մի փոքր հումորով գրում էր ընկերներից մեկին՝ Մկրտիչ Բարինուդարյանին.

Ենթակա անգամ գնացի Վեհափառին տեսության՝ մի անգամ տեսչի հետ՝ իրեն ճեմարանի ապագա ուսուցիչ և հետո Ներսես եպիսկոպոսի հետ՝ իրեն վանքի ապագա պաշտոնյա արվեստից հատակագծանաց և այլոց. մի դարմանալ, Մուրադյանը այստեղ ուսուցիչ էր ամենայն լեզվույն ֆրանսիականացն»:

Մակար կաթողիկոսի մահից հետո սրվում են տարածայնությունները հոգևորականների և դամատումների միջև, որի հետևանքով մի խումբ ուսուցիչներ ազատվում են պաշտոնից, այդ թվում նաև Վարդգես Սուրենյանցը: Նկարչի առաջավոր հայացքներին էջմիածնի միարանության շրջանակն անհամատեղելի էր:

1891 թ. հունիսին, փակելով իր հաշիվները ճեմարանի ղեկավարության հետ, Սուրենյանցը հեռանում է էջմիածնից:

Արվեստագիտի հետագա կյանքն ու գործունեությունը հիմնականում կապված է Սուսկվայի և Պետերբուրգի գեղարվեստական աշխարհի հետ, որտեղ ստեղծագործական մեծ աշխատանքի հետ մեկտեղ նա զբաղվում է հասարակական բազմակողմանի գործունեությամբ:

1894 թ. Վ. Սուլենյանցի ազգանունը կարդում ենք ոռու նկարիչների 1-ին համագումարը կազմակերպողների, ինչպես նաև քարտուղարության ցուցակում:

1895 թ. Վ. Սուլենյանցը ընտրվում է Փատմական նկարչության ցուցահանդեսները կազմակերպող վարչության անդամ:

Անցյալ դարի 90-ական թվականների մոռասական իրականության մեջ առաջ է քաշվում նկարչական դպրոցների բացման հարցը: Այդպիսի դպրոցներ բացվում են Պենզայում, Խարկովում, Յարոսլավում:

Նկարչական դպրոց բացելու հարցը հասունացել էր նաև Անդրկովկասի համար, որտեղից բազմաթիվ շնորհալի երիտասարդներ էին մեկնում Ռուսաստան գեղարվեստական կրթություն ստանալու նպատակով: Ապագա արվեստագիտների դաստիարակման գործում փոքր դեր չէին խաղացել Թիֆլիսի ներսիցան դպրոցի ուսուցիչներ Ստ. Ներսիսյանը, Հ. Քաթանյանը և Համշինյանը:

1896 թ. արտասահմանից ոռու անվանի նկարիչ Ի. Ռեպինը մի հոգված է գրում Թիֆլիսի «Կավազ» թերթին «Հոյքնա լի աշոկա առօստան Տիֆլիսը?» վերաբերությունը, ուր բարձր գնահատելով կրթության դերը արվեստագիտի համար, նշում է, որ Թիֆլիսում պետք է բացել նկարչության, քանդակագործության և ճարտարապետության գեղարվեստական դպրոց:

Սակայն ո՞վ պետք է լիներ այն արվեստագիտը, որին հանձնվեր դպրոցի գեկավարությունը և լրիվ վստահություն ցուցաբերվեր դեպի նրա դասավանդման մեթոդիկան:

Ի. Ռեպինն այդ մասին առանց վարանման գրում է.

«Թիֆլիսի համար, որքան ինձ թվում է, չի կարելի գտնել տեղական դպրոցի ավելի բավարար համար Սուլենյանցը»:

1898 թ. Վարդգես Սուլենյանցը նկարիչներ Հ. Ալվազովսկու, Գ. Գարիբիլյանի և ուրիշների հետ միասին իր մի շարք աշխատանքներով մասնակցում է Գր. Զանշլյանի խմբագրությամբ հրատարակվող «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածութին, իսկ 1902—1903 թթ. ձևավորում է բժ. Վահան Արծրունու կողմից հրատարակվող «Առողջապահիկ թերթիկ» և «Բժշկի դրույցներ» մասսայական գրքույկները:

1909 թ. որոշվում է հրավիրել նկարիչների համառուսաստանյան 2-րդ

Համագումարը, որի կազմակերպողներից է Մինում նաև Վարդգես Սուրենյանցը: 1915 թ. Հունվարին Վ. Սուրենյանցը Ա. Ի. Կուփիջու անվան ընկերության է նվիրում մի շարք էտյուդներ, որոնց վաճառքից ստացված գումարը հատկացվում է պատերազմում վիրավորված զինվորներին, իսկ էտյուդների հեղինակը արժանանում է հատուկ շնորհակալության: Նույն թվականին նա մասնակցում է Պետերբուրգում կազմակերպված հայ սովորականներին օգնող երեք օրվա հանգանակությանը, կատարում է մի շարք պլակատներ, որոնցից մեկը՝ «Պետրոգրադը՝ հայերին» գրաֆիկական թերթիկը պատերազմի զոհերին օգնող ուսա գրողների ընկերության խորհրդի խնդրանքով տպագրվում է «Նեօկի ալմահա—յերտամահ» ժողովածուի մեջ: Այդ ժողովածուին իրենց աշխատանքներով մասնակցել են նաև ուսա անվանի նկարիչներ Խ. Ռեպինը, Վ. Մակովսկին, Թ. Կուստոպիկը և ուրիշներ: Սուրենյանցը ակտիվ մասնակցություն է ունենում նաև Մոսկվայում և Պետերբուրգում կազմակերպվող հայկական բարեգործական երեկոներին:

1915 թ. աշնանը դեպի էջմիածին ճանապարհորդելու ժամանակ, Թիֆլիսում Վ. Սուրենյանցը մասնակցում է «Հայ արվեստագետների Միության» կազմակերպական աշխատանքներին, իսկ էջմիածնից վերադառնալիս՝ 1916 թ. մայիսի 1-ին, որպես ավագ անդամ ներկա է լինում առաջին հիմնադիր ընդհանուր ժողովին: Այդ երեկոյին, Ալ. Շիրվանզադեի, Հովհաննեսի և այլաց աշխատանքների համար առաջարկ է նշում առաջին հիմնադիր ընդհանուր ժողովին: Այդ խոսքից պահպանվել է մի գրավոր պատառիկ միայն:

«Հայ արվեստագետների Միությունը», որի նպատակն էր հնարավորություն ստեղծել հայ կերպարվեստը ժողովրդական լայն խավերի սեփականությունը դարձնելու, ինչպես նաև կազմակերպել գեղարվեստական կրթության գործը կովկասում, անկասկած արտահայտում էր այն երազանքը, որը տարիներ շարունակ հուզել էր հայ արվեստագետներին: Վ. Սուրենյանցն իր խոսքում, այդ առթիվ ասում է:

«Եվ հիմա աշխարհիս ամեն կողմը ցրված են զորեղ նկարիչներ, որոնցից ամեն մեկը իր գոտնված երկրում անուն են հանել և հոչակվել իրենց հայրենիքից դուրս, զորօրինակ Շահին, որ գոտնված է Փարիզում, Մախոխյան՝ Բեռլինում և շատ ուրիշներ: Եվ ամեն անգամ, երբ իրար պատահում էինք, միշտ լուրջ կերպով ցավակցում էինք, որ այդ կերպ անշատված ենք իրարուց և շենք կազմում մի ամփոփ ընկերություն: այդ գմնգատը ես անձամբ հանգույցյալ Հովհաննես աղա Այվազովսկուց ևս լսել եմ»:

Վ. Սուրենյանցն իր խոսքում առաջ է քաշում հայարնակ դավառներում



Յ. Բաղկասյանը, Վ. Սուրենյանցը, Մ. Սարյանը և Փ. Թեղեմազյանը 1916 թ. Քիչկառում:



(որտեղ գեղարվեստական աշխատանքների մասին հասկացողություն անգամ չկար) ցուցահանդեսներ կազմակերպելու հարցը, որը կօգներ ժողովողի գեղարվեստական ճաշակի զարգացմանը: Նա առաջնահերթ խնդիրներից մեկն է համարում մանկական խաղալիքների գեղարվեստական արտադրության հարցը, որին պետք է մասնակցեին կարող նկարիչներ, թացի այդ, նա անհրաժեշտ է համարում ժողովրդի համար կազմակերպել կերպարվեստի մասին դասախոսություններ, որի առաջին օրինակը ցուց է տալիս ինքը, 1916 թ. մայիսի 2-ին, հայ իրականության մեջ առաջին անգամ համդես դարձվ այդպիսի դասախոսությամբ՝ «Կլասիկ գեղարվեստի մասին» թեմայով:

Դրանք նպատակներ էին, որոնք սաղմնավորվել էին դեռևս կազմայան և մարանում ուսանելու տարիներին, հասումացել Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում, Շարժական Գեղարվեստական ջուցահանդեսների Ընկերության, ինչպես նաև ժամանակի առաջավոր ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչների հետ ունեցած շփման հետևանքով:

Իսկ այդ ժամություն շրջանակը խորն էր ու բազմակողմանի: Ա. Չեխով, Ֆ. Վեսելովսկի, Վ. Բրյուսով, Ն. Մառ, Ալ. Շիրվանզադե, Ալ. Մատուրյան, Հովհաննես, Հովհաննես, Պ. Աղամյան, Հովհաննես, Կ. Ստանիսլավսկի, Վ. Նեմիրովիչ-Դանչենկո, Պ. Աղամյան, Հովհաննես, Արելյան, Օվի Սևումյան, Ալ. Սպենդիարյան, Հ. Արվարձակ, Ի. Ռեպին, Վ. Սերով, Է. Շահին, Փ. Թերլեմելլան, Ե. Թագևոսյան, որոնց հետ ունեցած Վ. Սուրենյանցի ստեղծագործական կապերի մասին տեղեկանում ենք պահպանված նամակներից, հրատարակված նյութերից, ինչպես նաև ժամանակակիցների բանավոր հուշերից:

Վարդգես Սուրենյանցի առաջին բարեկամը, ինչպես նշեցինք, Հովհաննես Արվարձակին էր, որը տեսնելով նրա նկարչական ընդունակությունները, խրախուսեց և քաջալերեց իր փոքրիկ բարեկամին: Անկասկած, հետագայում Վ. Սուրենյանցը բազմաթիվ հանդիպումներ և զրուցներ է ունեցել աշխարհահռչակ ծովանկարչի հետ, որի մասին վկայում է ինքը «Հայ արվեստագետների միության» բացման ժողովի շնորհակարական խոսքում: 1899 թ. հրատարակելով իր կապիտալ աշխատամքներից մեկը՝ «Պուշկինի Քաղաքացիական շատրվանը» պոեմի համար կատարած նկարազարդումները, Վ. Սուրենյանցն այն խորին հարգանքով նվիրում է Հովհաննես Արվարձակում, իսկ վերջինիս մահից հետո կատարում է նրա կիսանդրին:

Հետաքրքիր բարեկամություն է եղել նաև Սուրենյանցի և անվանի ողբերգակ Պետրոս Աղամյանի միջև: Այդ ժամանականում տեղի է ունեցել

1888թ. Սոսկվայում, երբ Պ. Աղամյանը երկրորդ անգամ ելույթ է ունենում ուսւարակության առջև: Այդ նույն ժամանակ Վ. Սովենյանցը կատարում է «Աղամյանը Օթելոյի գերում» յուրաներկ աշխատանքը, վեց մատիտանկար, որոնք պատկերում են Աղամյանին Արքա Լիրի, Օթելոյի, Արքենինի դերերում, ինչպես նաև կյանքում: Պ. Աղամյանն իր հերթին նրան է նախրում մի լուսանկար՝ «Ազնիվ պատկանի»:

Սոսկվայում Վ. Սովենյանցը ծանոթանում է Ալ. Սպենդիարյանի հետ, հետագայում ձևավորում է նաև նրա մի շարք երգերի «Քրատարակությունները Շեյ, վարդի» ազդեցության տակ կատարում է «Աղերս առ վարդ» նկարը: Հայտնի է, որ Ղրիմում եղած ժամանակ Վ. Սովենյանցը անվանի կոմպոզիտորին հուշում է «Շամիրամ» օպերա գրելու միտքը:

Վ. Սովենյանցի ամենասերտ բարեկամությունը հայ մտավորականներից եղել է Ալ. Ծատուրյանի հետ, որին հասցեագրված քաղմաթիվ նամակներից պարզվում է, որ իր նյութական ծանր օրերի, ստեղծագործական ապրումների մասին, որոնք այնքան շատ են եղել Սովենյանցի կյանքում, նա հաղորդակից է գարձել միայն իր ռազմիվ բարեկամ», սահիբելի Ալեքսանդրին: Իսկ այն հորելյանական երկու ժաղոանկարները, որոնցից մեկում Վ. Սովենյանցը Ալ. Ծատուրյանին պատկերում է Պետակի վրա նըստած, հետևից հաշվիչի ծանրությունը քաշելիս, վկայում են այն մասին, թէ որքան խորն էր ըմբռում և ապրում իր ժամանակը արվեստագետը՝ իդեալներ, նպատակներ, որոնք զոհ են դատմում օրվա հացի համար մղվող պայքարին:

1909թ. լուս տեսավ «Մի լար, բլբուկ» երգը, որտեղ միաձույլ հանդես եկան բանաստեղծ Սատուրյանի, կոմպոզիտոր Սպենդիարյանի և նկարիչ Սովենյանցի աշխատանքները: Այդ երգի հրապարակումը նրանց բարեկամության բավագույն դրսերումն էր:

Վ. Սովենյանցը բազմաթիվ հանդիպումներ է ունեցել Հովհաննյանի հետ, համակրել է Թիֆլիսի հայկական թատերական ընկերության գործունեությանը, հնարավորության սահմաններում նրանց տրամադրելով իր կատարած Շեքսպիրի պիեսների թարգմանությունները: Թումանյանի ժառանգների վկայությամբ, երբ 1912թ. Հովհաննյանը դուրս է գալիս բանատից և ժամանակավորապես բնակվում իր բարեկամներից մեկի մոտ, Վ. Սովենյանցը կատարում է նրա դիմանկարը:

Վ. Սովենյանցը սիրալիք և հոգատար ընդունելության է արժանացել ծու։ Վեսելովսկու ընտանիքում և հատկապես նրա կնոջ՝ Մարիա Վեսելովս-

կայացի կողմից, որին ուղղված նամակներում նա միշտ երախտագիտական չերմ բառերով է արտահայտում իր շնորհակալությունը:

Անկասկած, այս կարգի բարեկամություններն իրենց բարենպաստ ազդեցությունն են ունենում նկարիչ-արվեստագետի աշխարհայացքի կազմակերպման և ամրապնդման գործում: Վ. Սուրենյանցը ողջ ստեղծագործական կյանքում հարազատ մնաց իր դեմոկրատական համոզումներին, որոնք նրա անունը դասեցին *XIX* դարի վերջի և *XX* դարի սկզբի ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչների շարքը:



## ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ

Հայ կերպարվեստի պատմության մեջ ժանրերի բազմազանությամբ, թեմաների բազմակողմանիությամբ, կատարման յուրատիպությամբ բացառիկ տեղ է գրավում Սուրենյանց-գեղանկարիչը: Նրա ստեղծագործության մեջ հատկապես առանձնանում են պարսկական թեմաներով կատարված աշխատանքները, որոնք նկարչի կողմից դեպի արևելքն ունեցած մեծ հետաքրքրության արդյունք են: Ժամանակակիցների վկայությամբ, արևելյան երգիշների ստեղծագործությունները հայ, ուստի և նվազապահան կլասիկների հետ միասին եղել են նրա հարուստ գրադարանի զարդը: Արվեստանոցում ընկերների համար նա հաճախ է ընթերցել Հաֆիդի գաղելները, Օմար Խայամի քառյակները, ինչպես նաև հատվածներ Ֆիրդուսու Շահնամեա պոեմից:

Վարդես Սուրենյանցը իր պարսկական էտյուդների ամբողջ շարքը, որը բերել էր 1885—1886 թթ. Պարսկաստան կատարած ճանապարհորդություննեց, ցուցադրում է միայն 1892—93 թթ. Մոսկվայում՝ «Արվեստ» սիրողների ընկերության՝ ցուցահանդեսում:

Այդ ստեղծագործությունների որոշ մասն է միայն մեզ հասել, ինչպես՝ «Պարսկական տան ճակատ Զուղայում», «Էտյուդ խաչքարով», «Դուռը

ստալակտիտով՝, «Ղոհրուղ գյուղի տեսարան», «Նստած պարսիկներ», «Երիտասարդ պարսիկի զիմանկարը» (Հայաստանի Պետական Պատկերասրահ), Սրանք հնտագալում խոշոր կտավներ ստեղծելու նպատակով կատարած էտյուփներ են, որոնցում Սուլբենյանցը յուրօրինակ ձևով է մոտեցել արեւելան բնության պատկերմանը: Վերցնելով կիզիչ արև, կեսօր, արևից շիկացած քարեր, կավե տուն՝ ամայի, շոր քակով, նկարիչը հեռու է մնում տրադիցիոն արևավառ գույներից, կարողանում է ընկալել այդ երկրին բնորոշը, հիանալ բնության ամեն մի տեսարանով և արտահայտել բնության ներքին արամադրությունը: Այդ նկարներում զգացվում է Վ. Սուլբենյանցի հատուկ համակրանքը դեպի պարսկական արվեստում մեծ տեղ գրավող գեղեցիկ վարդանկարները, որոնք հնտագալում առավել կենդանություն են ստանում պարսկական թեմաներով կատարած նրա մի շարք կոմպոզիցիոն աշխատանքներում:

Թինագատներից մեկը 1892 թ. իր գրախոսականում Վարդես Սուլբենյանցի նման յուրօրինակ նկարիչ համեմես գալը և Արվեստը սիրողների ընկերության ցուցահանդեսում համարում է ուրախալի երևույթ, հիանում է նրա արևելքը հասկանալու և արևելյան յուրահատուկ վարդանկարներն այդ աստիճան վարպետորեն պատկերելու հմտությամբ և միևնույն ժամանակ ավելացնում է:

«Հավանարար այս յոթ տարիների ընթացքում էտյուփները շատ են փոխվել և մուգացել, որի շնորհիվ նրանց մեջ չկա տոների այն վառ գույների մաքրությունը, որն այնպես ցանկալի է տեսնել հեռավոր արևելքի էտյուփներում»: Դա պատճական դիտողություն չէր:

Արևելքը բազմաթիվ վառվուն գույներով մի հեքիաթ էր, կախարդական մի աշխարհ, որտեղից վերցված թեմաների վերաթռտադրման ժամանակ օրիենտալիստ նկարիչները օգտագործում էին ներկապնակի ամենավառ մարուր գույները, սակայն Սուլբենյանցը հեռու էր այդ կարգի կտավներ ստեղծելուց: Միատարր լույսի, մեղմ տոների միջոցով լուծված նրա բնանկարներում հականը այդ երկրի բնության բնորոշը վերարտադրելն ու ընդհանրացնելն էր, Ահա այդ համբամանքն էր, որ հորմածադրին ստիպում է դրել, թե այդ աշխատանքներում չկար տոների վառ գույնը և մաքրությունը:

Պարսկական թեմաներով կատարված Վ. Սուլբենյանցի նկարների շարում ուշագրավ է «Սերենադա» նկարը (1888 թ., Հայաստանի Պետական Պատկերասրահ), որն ամենայն հավանականությամբ կատարված է պարսկական սիրո երգիչների ստեղծագործությունների ազդեցության տակ:

Ընտրված վայրը Շիրազի նշանավոր Աֆիֆ-Աբադ այգու մի անկյունն է, իր արևելան ոճի գեղեցիկ ցանկապատով, դեպի վեր խոյացող, լուսնի լույսով ողղոված նազերի մշտագալար նոճիներով։ Հճակի մոտ, ցանկապատին հենված, իր հրաբորութ սիրո երգն է երգում երիտասարդ պարսկուհին, որին հիացած ունկնդրում է նրա սիրո առարկան։ Հարավային տաք, ուշ երեկո է... Ամբողջ բնությունը լի է կյանքով։ Նկարիչն ամեն ինչ պահում է մեկ ընդհանուր տոնի մեջ՝ ցանկապատը, լճակը, շրուցած ծառը, իսկ լուսնի նառագայթները արծաթավով, յուրօրինակ զերմություն են տարածում նոճիների գագաթներին, ֆիգուրաների դեմքերին։ Առաջին ստեղծագործություններից մեկում արդեն առկա է վ. Սուրենյանցի ողջ ստեղծագործությանը հատուկ բնորոշ մի գիծ—հասնել իրերի նյութականության, իրերի ֆակտորայի այնպիսի արտահայտչականության, որն իր գունային նուրա անցումներով, տոնային լուծմամբ նպաստի նկարի ընդհանուր տրամադրության արտահայտմանը։ Նկարի մեջ փերմություն, կյանքի հանդեպ ոմնեցած հիացմունք կա։ Վ. Սուրենյանցի պարսկական թեմաներով կատարած մեզ հայտնի աշխատանքներում այս նկարը կմնա յուրահատուկ, որովհետև նրա մեջ նկարիչը ներդրել է իր ստեղծագործական ամբողջ ժեսու, նկարչի իր հուզվերը, իր վերաբերմունքը դեպի բնությունը։ Նկարի կոլորիտում իշխողը դեռևս մուգ շագանակագույնն է, սրավ այդ նկարը առնչվում է Մյունիսանցան շրջանի ակադեմիական աշխատանքների հետ։

1892 թ., ոգևորված պարսկական նկարների հաջողություններով, վ. Սուրենյանցը սկսում է աշխատել «Պատանի Հաֆիզը երիտասարդ շիրազուհիներին գովերգում է Մուսելի վարդերը» նկարի վրա, մի թեմա, որի ստեղծման միտքը նաև հղացել էր գեռման Պարսկաստանում։ 1886 թվականին նկարիչն այցելել էր Հաֆիզի դամբարանը Շիրազում, որը մեծ հարգանք էր վայելում ժողովրդի մեջ։ Կատարելության աստիճանի տիրապետելով պարսկերներին, որ ինչպես ասացինք սկսել էր ուսումնասիրել դեռևս խաղարյան ճեմարանում, Ստ. Նազարյանի անմիջական ղեկավարությամբ, վ. Սուրենյանցը, մինչև Պարսկաստան մեկնելը, արդեն ծանոթ էր Հաֆիզի գաղեներին, որոնք անկասկած հուզել էին արվեստագետին իրենց անկեղծությամբ, լիրիկական խոր շնչով և ձեռքի կատարելությամբ։

«Արվեստը սիրողների Սոսկովյան ընկերության» 12-րդ ցուցահանդեսում (1892—1893) վ. Սուրենյանցը ցուցադրում է «Հաֆիզի երգը» իրուագիրը կրող կտավը, որը նույն թեմայով հետագայում կատարած աշխատանքի նախնական տարբերակն էր (նկարի տեղն անհայտ է)։ Թեմայի մեկնարանմամբ և կատարուամով անկասկած նա դեռևս չէր ոմեցել այն ներգոր-

ժությունը, ինչպես երկրորդ աշխատանքը և միայն դրանով պետք է բացատրել առաջին կտավի ցուցահանդեսն այցելողների ուշադրությունից դրս մնալը: 1896 թ. Շարժական Գիղարվեստական ցուցահանդեսների Ընկերության (*Գերեզմանիկների*) 24-րդ ցուցահանդեսում ցուցադրված է եղել երկրորդ տարրերակը: Այդ մասին վկայում է նույն ցուցահանդեսի կատալոգում տպագրած «Պատանի Հաֆիզը» նկարի լուսանկարը, որի ցածրում պարզորոշ ընթերցվում է «Ե. Սուրենյանց 95»: Պարզ է, որ Սուրենյանցին Հափիզի կերպարը հրապուրել է որպես ժողովրդի հետ կապված աշուղ, որպես սիրո, գեղեցկության և երիտասարդության երգիչ: Այդ կտավը մի հետաքրքիր կոմպոզիցիոն աշխատանք է, որով նրա հեղինակը կարողացել է իրեն դրսնորել, որպես կյանքի տառմանափրման և պատկերման ճիշտ ճանապարհի վրա կանգնած մեծ ապագա խոստացող երիտասարդ ստեղծագործուուր Այդ նկարի մասին պահպանվել են մի շաբթ հետաքրքիր կարծիքներ: Հատկապնա արժեքավոր է Վ. Ա. Սերովի և Ի. Ե. Ռեպինի վեճն այդ նկարի մասին, Վ. Ա. Սերովը բարձր գնահատելով Հափիզի և նրան լուղ ազգկա ֆիգուրաների կատարումները, մնացած բոլոր հարցերում այն հավասարեցնում էր ոմիշակ գործիք աստիճանին, իսկ Ի. Ե. Ռեպինին հուզում էր այն նորը, որը ցուցահանդես էր բերել երիտասարդ արվեստագետը: Ծեշտելով գծանկարում եղած թերությունները, նա միաժամանակ բարձր է գնահատում նկարի ընդհանուր տրամադրությունը, աղջկների դեմքերի ռեալ, բնորոշ պատկերումը, Հափիզի կերպարը, որի պատկերման մեջ դիտողը զգում է դեպի սիրո առարկան ունեցած նրա ձգուման ներքին թափը: Հուզիչը միայն թեման և նրա մեկնաբանումը լիր: Ի. Ռեպինին հիացնում էր նաև գեղանկարչական նոր մոտեցումը:

«Տարօրինակության համանող օրիգինալություն, շորովթյան հասնող զսպվածություն, կրքու սեր հազիմ նշարելի նշատալների նրբության հանդիպա, որոնք նկարը դարձնում են շառաջացող նոր դպրոցի վառ տիպար»:

Ռեպինյան այս բնորոշումը հատուկ է Վ. Ա. Սուրենյանցի ամբողջ արվեստին: Ինքը՝ Վ. Ա. Սուրենյանցը, բարձր է գնահատել Ի. Ռեպինի կարծիքը իր մասին:

Նյութական վիճակը կարգավորելու նպատակով Վարդգես Սուրենյանը 1907 թ. ընդունում է Վլադիկավկազի հայկական եկեղեցու համար սըրապատկերներ կատարելու պատվերը, սակայն պատվիրատու-հոգևորականին զուր չի գալիս Սուրենյանցի գեղանկարչական մեթոդը: Հայտնելով այդ

<sup>1</sup> «Կավկազ», 1897 թ., № 78, И. Репин, «Нужна ли школа искусств в Тифлисе?».

մասին իր դժբահությունը նկարվեն հասցեագրված նամակում՝ նա ավելաց-  
եռում է. «Ուղարկեք գոնե ինչ-որ մի վկայական, որ Դուք իրոք գեղանկարիչ  
եք, այլ ոչ հասարակ դեկորատոր»: Եվ ահա Սուրենյանցը շարադրում է  
արվեստագետի հպարտ հոգուց բխող իր տողերը, ուր գորում է.

«Նկարելաձեզ, որով կատարված են սրբապատկերները, իմ սեփականն  
է, որը յուրացվել է տարիներ տևող գեղարվեստական փորձի հետևանքով։  
Վրձնահարվածները մանրակրկիտ մտածված են և չեն ենթարկվել անդե-  
մության, ինչպես արվում է շուկայական սրբապատկերներում։ Այդպիսի  
վրձնահարվածների համար... ինձ շնորհվել է ոսկե Մեդալ Թիֆլիսի  
վերջին՝ 1901 թ. ցուցահանդեսում։ Եթե Զեզ հետաքրքրում է ավելին, ապա  
կարող եմ մատնանշել աշխարհահուշակ նկարիչ Ռեպինի նշանավոր գիրքը՝  
«Հիշողություններ» և հոդվածներ», էջ՝ 220—254»:

Ի. Ե. Ռեպինի կարծիքը Վարդգես Սուրենյանցի համար արդեն մի հե-  
ղինակավոր վկայական էր։

Նկարն արժանանում է նաև Վ. Վ. Ստասովի ուշադրությանը, որն  
իր հերթական հոդվածներից մեկում, խոսելով Պերեդմիժնիկների ցուցահան-  
դեսի մասին, անդրադամում է նաև Վ. Սուրենյանցի «Հաֆիզի երգը» կտա-  
վին։ Վ. Ստասովը հիշատակում է արևմտաելորպական նկարիչների կող-  
մանց Հաֆիզին նվիրված նկարները և Վ. Սուրենյանցի աշխատամքը համարում  
մի քայլ առաջ։ Նա միաժամանակ շեշտում և բարձր է գնահատում նկար-  
չի արևելյան ճարտարապետությանը լավատեղյակ լինելը և նկարի ընդ-  
հանուր գումագեղությունը<sup>1</sup>։

«Հաֆիզի երգը» աշխատամքով Վ. Սուրենյանցը կարողացավ իրեն  
դրսերել որպես մի կարող ուժ, մի ստեղծագործող, որն առաջին իսկ քայլե-  
րից հեռացավ օրինատալիստների արևելյան կյանքի տրադիցիոն իդեալա-  
կանացումից։

Տարիներ շարումակ Վ. Սուրենյանցին հուզել է նաև արևելյան անմաս  
երգիչներից մեկի՝ Ֆիրդուսու կյանքին ու ստեղծագործությունը։

Դեեւի Ֆիրդուսին և նրա ստեղծագործությունն ունեցած հիմքարքու-  
թյան արտահայտությունն է 1902 թ. Շարժական Գեղարվեստական Ցուցա-  
հանդեսների Ընկերության 30-րդ ցուցահանդեսում ցուցադրված «Սպիտակ  
ամրոց» նկարը (նկարի տեղն անհայտ է. պահպանվել է լուսանկարը)։ Աշ-  
խատամբը կատարված է որպես տրիպտիխ, որի կենտրոնական մասում

<sup>1</sup> В. В. Стасов, «Заметки о 24-ой выставке передвижников», «Новости и  
Бирцевая газета», 1896 г., № 60.

պատկերված է այն պահը, երբ Զոհրաբի դեմ, Սերիդ (սպիտակ) ամբողջ մոտ, իր հոր պարտությունից հետո, մենամարտի է գուրս գալիս Թերդաֆրիդը՝ տղամարդու պես զրահավորված։ Տրիպտիխի աշ Կողմում նեղ երիզով պատկերված են վրանի առջև նոտած թուրանցի ուազմիկներ, որոնք բերկրանքով են դիտում Զոհրաբի հաղթական մենամարտը, իսկ ձախում՝ պատշաճմբի մոտ, Թերդաֆրիդի ընկերուհիներն են ու սպասուհիները, որոնք խոր վշտով ողբում են իրենց տիրուհու պարտությունը։

Տրիպտիխը նորություն էր նկարչի ստեղծագործության մեջ, սակայն Սուրեննացը կարողանում է գտնել երեք համապատասխան կոմպոզիցիաներ, որոնք առանձին աշխատանքներ լինելով հանդերձ, այնպես են մեկնարանված և կառուցված որ, դիտվում են որպես մեկ ամբողջություն։ Կողքերի երկու ուղղածիք նեղ կտավները ֆիգուրաների միջոցով ձգվում են վեր։ Մեկում թուրանցի տղամարդիկ նստած են թեր սարալանջին և հետաքրքրությամբ դիտում են կենտրոնական կտավում կատարվող հիմնական գործողությունը։ Աշակողմյան մասում Թերդաֆրիդի սպասուհիների լուսցիկ ֆիգուրաներն են, որոնք նազանքով թերել են իրենց գլուխները։ Աղջիկները պատկերված են կամ պատշաճմբում, կամ նստած են նրա նուրբ զարդարանդակված եղբին, կամ կանգնած են ցածում։ Ֆիգուրների այս կարգի դասավորությունը յուրօրինակ երաժշտականություն է հաղորդում աշխատանքին։ Կենտրոնական, հիմնական կոմպոզիցիայում խոշոր տեղ է հատկացված հեռանկարի հարցերին, ինչպես նաև սարերի վրա ընկած ուժեղ լույսին, որոնց միջոցով մենամարտի երկու կերպարները կապվում են իրար հետ։ Նկարի մեջ կա շարժում, տրամադրություն և ներքին մոնումենտալություն։

Տասը տարի անց, Շարժական Գեղարվեստական Ցուցահանդեսների Ընկերության 42-րդ ցուցահանդեսում, Վ. Սուրեննացը ցուցադրում է «Ֆիրդուսին կարդում է իր «Շահնամեն» Մահմետ Ղազինացում» պատկերը (Հայաստանի Պետական Պատկերասրանը), որում թվում է, թե նկարիչն ամփոփում է իրմասումները արևելյան երգիչների կերպարների պատկերավորման հարցում<sup>1</sup>։

Ֆիրդուսին Մահմեդ Ղազինացու առջև ծնկաշոք կարդում է իր թագավորների գիրքը։ Սուրեննացը կտավում Ֆիրդուսուու դեմքը չի երևում, սակայն դիտողը զգում է այդ պահին նրան համակած ոգևորությունը։ Շուրջն

<sup>1</sup> Հայանի է, որ Վ. Սուրեննացը 1901 թ. կատարել է մեկ ուժից աշխատանք՝ նվիրված Ֆիրդուսուն, որտեղ Ֆիրդուսին, ինչպես նշում է Հոգվածագիրներից մեկը, «Շահի պալատականների առջև, ոգեսրված գիրքով», իր ուսուցիչ Ֆելիքի շոյող, բարեհան ժայռից խրախուալած, արտասանում է «Շահնամեն»։ Նկարի տեղն անհայտ է։

ամեն ինչ քարացած է, և գահին նստած շահը, և նրա ստքերի մոտ բազմած հովազը, և գահի կողերին կանգնած մանկավիկները, և երկու կողմում շարված պալատականները: Մեծ արվեստագետին հատուկ վարպետությամբ վ. Սուրենյանցը կարողանում է մասնավոր կերպարների պատկերումով հասնել գեղարվեստական խոշոր ընդհանրացումների: Պալատականների խորամանկ, իսկ երբեմն ոչինչ չասող, բութ հայացքները, գահին բազմած խստափայլ աշքերով շահը և, որպես նրա ուժի հզորությամ սիմվոլ՝ ոտքերի տակ նստած հովազը, հետևում կանգնած զինված թիկնապահները հայելու նման արտացոլում են այն կյանքը, որի մասին արևելան բազմերանգ գույներով շարադրված է Ֆիրդուսու ձեռքին բռնած թերթիկներում: Պատկերի կոմպոզիցիայի կառուցման ժամանակ վ. Սուրենյանցը առաջնորդվում է միզանացենների և բեմական գեկորների կառուցման սկզբունքով, որը շեշտում է մոմենտի պայմանականությունը: Դա պետք է բացատրել նաև նրանով, որ կտավի ստեղծմանը նախորդող մի ամրող տաճամյակ վ. Սուրենյանցը խոշոր աշխատանք է կատարել որպես թատերական նկարիչ, որն իր յուրատիպ կնիքն է թողել նրա կոմպոզիցիայի կառուցման մտածերակերպի վրա: Գահի, զգեստների բազմագույն խայտարդես զարդանկարները, ծառերի ճյուղերն ու տերևները դրված են հորիզոնական դիրքով: Անգամ վլձնահարվածներն ունեն նույն հորիզոնական ուղղությունը: Ընդհանուր կապուտի, կարմրի, կանաչի և նարնջագույնի մեջ Ֆիրդուսու կերպարը միակ ամրողական մոխրագույն բիծն է աշխատանքում:

Նկարն ուշագրավ է նաև կատարման տեխնիկայով: Վ. Սուրենյանցը հարզատ մնալով կատարման ուսալիստական սկզբունքներին՝ միաժամանակ կիրառում է պուանտելիզմին բնորոշ պրիուներ, որոնք հիմնականում օգտագործել են զգեստների, բարձերի, գորգերի և գահի զարդանկարների պատկերման ժամանակ: Այդ պայմանական խայտարդես զգեստների, իրար ձուլվող ծառերի, գորգերի նախշերի գծերի և կետերի միջից հեղինակը դիտողին է մատուցում զուապ ուսալիստական տեխնիկ կատարված դեմքերը:

Դա արդեն անցյալ դարի 90-ական թվականների վարդգես Սուրենյանցի հանգիստ, նկարի բոլոր դետալները ամենայն մանրամասնությամբ մշակած գունանկարչական մոտեցումը չէ, որը ինչպես երևում է դուր չեր գալիս հենց իրեն՝ նկարչին: Այդ մասին վեբայում է նրա ժամանակակիցներից մեկը, որը ընդուրածակ մի հոգվածում խոսելով վ. Սուրենյանցի արվեստանոցից ստացած իր տպավորության մասին, բերում է նաև նկարչի նրբոհիշյալ խոսքերը.

«Ինձ մոտ, բոլոր կողմերով ստացվում է չափից ավելի առանձնացած, մաքուր և հարթ... Դա թերություն է, որովհետև նկարը պետք է արտահայտի

կլանքն այնպես, ինչպես որ նա ներկայանում է մեր հայացքին։ Հավանաբար, եթե դուք դիտում եք մարդու գեմքը, դուք շեք կարող տեսնել նրա զգեստի բոլոր մանրամասները, սապովների կարկատանները կամ անդրավարտիքի վրայի կարերը։ Դրանք երկրորդական առարկաներն են, որոնք ձեր ընկալող տեսադաշտից դուքս են, երևում են ձեզ ընդհանուր գծերով և այդպես էլ պետք է պատկերել նրանց կտավի վրա։ Կենտրոնականը, գլխավորը պետք է լինի նիշտ, որոշակի, մանրակրկիտ, մնացած՝ ընդհանուր գծերով<sup>1</sup>։

Ուշագրավ է նաև նույն այդ շրջանում ստեղծված «Սալոմե» աշխատանքը՝ կտարաված Օ. Ռևալիդի համանուն պիեսի աղդեցության տակ։

Բիրլիական հերոսունու կերպարը բազմիցս կերպարվեստի ստեղծագործության նյութ է հանդիսացել։ Գլխավորապես պատկերել են նրան Հովհաննես Մկրտչի գույխը կրող սկսուեղը իր հայթանակած ձեռքերով պիրկ բըռնած հայացքի մեջ՝ անսահման սիրո մոլուցքից առաջացած վրեժինդրության զգացում։

Վ. Սուրենինյանը մոտ, արդեն փոթորկու հոգեկան ընդվզումից հետո, ինքն իր պարագաներու զգացող Սալոմեն է, զարդանկարված պատի ֆոնի վրա արեւելլան շքեղ ծանր ծածկոցն անփուլթ ուսերին գցած, ձեռքերը կանթած գոտկատողին։ Մի կողմէ է գնացել վզի շղթան, կոնքերին է իշել ոսկե լախ գոտին, եթե խոնարհված աշքերն ու կիսաբաց շրթները արտահայտում են նրա հոգու խոռվքը, նրա վիրավորված ինքնասիրությունը, ապա հպարտ ու խրոխտ կեցվածքը, ողջ կտավի բարձրությամբ ծնկներից պատկերված նրա ֆիգուրան իր մեջ կրում է հանգուգն, հպարտ, հանուն սիրո նոր պայքարներ որոնող Սալոմեին։ Այստեղ Արևելքն է իր որմնանկարներով, շոների զարդարանդակներով, արևելյան գործվածքեղենի շքեղությամբ և հարստությամբ։ Այստեղ Սուրենինց—գեղանկարիչն է հանդես գալիս որպես խոշոր կոմպոզիտոր։ Եթե քառանկյունաձև կտավի ձախ կողմում Սալոմեն է մուգ շագանակագույն դրան մոտ կանգնած, ապա կտավի աջակողմյան մասում հավասարակշռություն է ստեղծվում կանաչավուն տոների նուրբ օգտագործմամբ։ Դարձալ կտավը չունի ուժեղ լուսատվեներ, դարձալ միապաղպաղ, հանդիսու արծաթավուն կոլորիտն է, սակայն ողջ կտավի անհանգիստ ու յուրօրինակ երաժշտականության պատրանք ստեղծող դարդանկարները, որոնց վերարտադրման հարցում մեծ վարպետությամբ որպես դույն է օգտագործվում նաև կտավի թեթև բաց շագանակագույն ֆոնը, վկայում են

<sup>1</sup> X. В е р м и ш е в, «В студии художника В. Суреняна», «Новое обозрение», 1902 г., № 6102.

Սուրենյանցի արվեստում մուտք գործած նոր տրամադրությունների և արտահայտչական նոր միջոցների մասին: «Սալոմեն» դարի սկզբի տաճանայակում Վ. Սուրենյանցի կատարած լավագույն գեղանկարչական ստեղծագործություններից մեկն է: Այդ աշխատանքն իր հետ բերում էր գեղանկարչական նոր մեկնարանում, որի սաղմերը գեռևս դրված էին «Սպիտակ ամրոց» նկարի հիմքում:

Դեպի արևելյան արվեստն ունեցած սերը Վ. Սուրենյանցի մոտ պահպանվում է մինչև կյանքի վերջը և պատահական չէ, որ 1897 թ., երբ նա ուղևորվում է Խոպանիա, Նրան հիմնականում հետաքրքրում էր մավրիտանական ճարտարապետությունը: Ճանապարհին, մոտ երկու շաբաթ, նա մնում է Վիեննայում, ուր մեկ անգամ ևս այցելում է Պատմության թանգարանը և Նկարում նրա գեղարվեստակամ խոշոր հետաքրքրություն ներկայացնող գլխավոր աստիճանները: Նույնքան ժամանակ մնալով Փարիզում, ուսումնասիրում է արևելյան քանդակիների ընդօրինակությունների թանգարանը՝ Տրուկադերոն, լինում է Սեն-Դենիում, Գիանում տեղի եկեղեցու վերաշինող, ֆրանսիացի նշանավոր ճարտարապետ Վիոլե լե Դյուքի տաղանդավոր աշխատանքով, ապա նոր անցնում է Խոպանիա:

Խոպանիա կատարած ճանապարհորդության մասին պահպանվել է Վ. Սուրենյանցի ռևամպակներ Սպանիայից խորագիրը կրող հոդվածաշարքը<sup>1</sup>, որտեղ նաև շարադրում է խոպանական ժողովրդի կենցաղից, նիստ ու կացից ինչպես նաև խոպանական արվեստի և ճարտարապետության հուշարձաններից ստուգած իր տպավորությունները:

Խոպանիայում Վ. Սուրենյանցի առաջին տպավորությունները կապված են Բարսելոնայի հետ: Նկարիշ-ճարտարապետը մեծ բավականությամբ է նկարագրում Բարսելոնայի մայր տաճարը, նրա ճարտարապետական մանրամասնությունները երրեմն համեմատելով հայկական ճարտարապետական կոթողների հետ: Նա իր հաշցմումքն է արտահայտում խոպանացի խոշորագույն նկարիշներ Սուրենյանցի, Վելասկեզի և Ռիբերայի գործերի մասին: Կորուպավայի նշանավոր մզկիթը նկարիշը համարում է արաբական գեղարվեստի գլուխ-գործոցներից մեկը, սակայն այդ ամենը նրա աշխատ կորցնում են իրենց հմայքը, երբ նա համում է Գրենադարա: Հատկապես ուշագրավ է այն-տեղից գրած նրա վերշին նամակը, որտեղ Վ. Սուրենյանցը տալիս է: Հե-

<sup>1</sup> «Էլքամանք», 1898 թ., № 1, 2, 4: Նամակների շաբաթը չի ափառավում ցարական գրաքննության կողմից «Էլքամանքի» հրատարակումը 6 ամսով դադարեցնելու պատճենով: Զապարված թերթիկներ Սեվիլիա այցելելու մասին հրատարակել է «Սովորական արվեստ» ամսագիրի 1957 թ. № 7-ում:

ռարբերիր ժանոթություններ իսպանական ժողովրդի կյանքից, պատմությունից, և ապա հատկապես կանգ է առնում իսպանական գեղարվեստի հուշարձանների նկարագրությունների վրա: Սակայն այդ ամենի հետ նա ամենուրեք տեսնում է ժողովրդի թշվառությունը, աղքատությունը, նրա շարքաշկանք:

Թարսելունայում աշքի է զարդում մուրացկանների բազմությունը, որոնք ոմի-մի երաժշտական գործիք ծեռին թափառում են փողոցից-փողոց, երբեմն էլ ամբողջ քառաձայն խմբեր կազմած կանգ են առնում փողոցի կամ հրապարակի վրա և նվազում են՝ այնքան գեղեցիկ, այնքան երաժշտական ճաշակով, որ մարդ ափսոսում է, թե ինչո՞ւ է այդ փողոցում կատարվում։ Վալենսիայում քաղաքի արվարձանները նրան վշտացնում են իրենց, նեղ, կեղառու փողոցներով, դրանք վ. Սուրենյանցին հիշեցնում է Պարսկաստանը, «ոնուն յուղու կերպուրներն են պատրաստում փողոցի մեջտեղում, նույն ճիշճերային հոտերն ու ծովսը, նույն կեղառու ջուրն է վազում փողոցով»։ Գրենադայում նրան ապշեցնում է այդշափ տարածում ստացած մուրացկանությունը։ «Մարդ լի կարող հինգ քայլ պնիկ, առանց վեց մուրացկանի հանդիպելու— վշտացած գրում է ճանապարհորդ նկարիչը»։

Վ. Սուրենյանցի ճանապարհորդությունն իսպանիայում մնում է անավարտ 1898 թ. ապրիլի 21-ին սկիզբ առած ամերիկո-իսպանական պատերազմի պատճառով։

Այն, ինչ այդպես վարպետորեն նկարագրում է ճանապարհորդ Սուրենյանցը, առավել սխալ գույներով պատկերում է նկարի Սուրենյանցը, վ. Սուրենյանցն իր նկարների իսպանական շարքի հիմնական մասը ցուցադրում է 1898 թ. բացված ժՊատմական նկարիչների միության Յ-րդ ցուցահանդեսում, 1901 թ. Բարվի անհատական և Թիֆլիսի գեղարվեստական ցուցահանդեսներում, իսկ որոշ նկարներ, ինչպես օրինակ՝ «Սեն-Ժերմեն եկեղեցին Փարիզում», «Եղիշիթի բակ Ալհամբրայում (Գրենադա)» ցուցադրվում են Շարժական Գեղարվեստական Ցուցահանդեսների ընկերության 26-րդ ցուցահանդեսում։ Վ. Սուրենյանցի իսպանական էտյուրները հիմնականում փոքր չափի բնանկարներ և տեսարաններ են՝ Վալենսիայից, Կորդովայից և Գրենադայից կամ ճարտարապետական բնորոշ կտորներ։ Իսպանական այդ նկարաշրջանում ուրուցն տեղ է գրավում «Ալհամբրա» փոքր կտավը ( $32,5 \times 20$ , Հայաստանի Պետական Պատկերասրահ), որը վ. Սուրենյանցի բավագույն բնանկարներից է։ Այդ աշխատամքում հատկապես հիացմունք է պատճռում հեռանկարային հարցերի վարպետ լուծումը։ Նկարիչը խորությունն ու տարածականությունը տանում է պլաններով, որտեղ անցումները կայուն

են, յուրաքանչյուրն ումի իր տնային լուծումները։ Այստեղ ամեն ինչ հագեցված է գովազնով և շողղողում է սաղափի բազմագույն երանգներով։ Այստեղ շագանակագույնի երանգները խոյակ են ու նրբաջուա զարդարանդակ, սալահատակ են ու գեղեցիկ մի սյուն, այստեղ մեծ արվեստի ամենազոր ուժն է՝ դարձած մի փոքր բնանկար։ Ալհամբրայի գեղեցիկ այումները նկարիչը հետագայում օգտագործում է շիսպանուհիները գողտրիկ կտավում, որտեղ թվում է, թե իսպանուհիների գեղեցիկ ֆիգուրաների պատկերումները առիթ են հանդիսանում մեկ անգամ ևս կտավին հանձնելու իսպանական արվեստից ստացած իր տպագորությունները։ Հատակին գցած արևելյան գումագեղ և նկարագարդ գորգը իր տաք կարմիր և կանաչ գույներով՝ ներդաշնակում է իսպանուհիների նուխագույն նկարագարդ թավշյա զգեստներին, օգնում որպեսզի նկարի ցածի մասը որոշ ծանրակշռություն ձեռք բերի։ Պատերի գորելենատիպ մուգ գարդանկարները, դեպի վեր սլացող մավլիտանական սրտաները, որոնք իրենց վերին մասում հատվում և ստեղծում են ստալակտիտե խորություններ, ձովզում են պատերի կանաչավում խճանկարին և ստեղծում գեղեցիկ գումային ներդաշնակություն։

Արևելքը, իսպանիան միշտ էլ հետաքրքրել և հուզել են Վ. Սուրենյանցին, սակայն նրա ստեղծագործական դեմքը բնորոշող աշխատանքները, կապված են հայ ժողովրդի կյանքի ու նրա ճակատագրի հետ։



1892—1896 թթ. հայկական կոտորածների օրերին հայրենասեր արվեստագետը լսում է հարյուր-հազարամյոր որբերի դառլ վիճակի, հուշարձանների ավելիման մասին։ Նա ապրում է իր ժողովրդի նոր ողբերգությունը և արձագանքելով՝ այդ ամենին ստեղծում մի շարք բարձրարվեստ ստեղծագործություններ, որոնք իրենց մեջ կրում են արվեստագետի անսահման վիշտն ու ցանումը, միաժամանակ արտահայտելով իր ժողովրդի լուսավոր ապագայի հանդեպ ունեցած նրա մեծ հավատը։

1894 թ. Շարժական Գեղարվեստական ծուցահանդեմների Ընկերության (Փերեգլեթինիկների) 22-րդ ցուցահանդեմում Վ. Սուրենյանցը ցուցադրում է այդ թեմայով իր առաջին խոշոր ստեղծագործությունը՝ «Լքյալը» (Ալմա-Աթայի Տ. Եկեղեցոյի ամվան Պետական Գեղարվեստական Պատկերասրահ)։

Եկեղեցու փակ դռան առաջ, ստարորիկ, գուփիր կրծքին հենած, նստած լալիս է մի փոքրիկ աղջիկ։ Ոտքերի մոտ ընկած է գլխաշորի մեջ փաթաթած նրա ամբողջ ոմեցվածքը։ Դա այն հայ որբուհին է, հարյուր-հազար-

ներից մեկը, որը սովոր և կրակի միջով անցել է քաղաքից-քաղաք, շի գտել մի ցավող սիրտ, մի օթևան:

Վ. Սուրենյանցին հաջողվել է ստեղծել հայ որբուժու հավաքական կերպար, գեղարվեստական մեծ ընդհանրացումով բարձրացնել նրան իր ժողովրդի անհուսալի վշտի աստիճանին: Այնքան վիշտ և խոր զգացմունք է ներդրել նկարիչն իր այդ աշխատանքում, որ իր ժամանակի հողվածագիրներից յմեկը իրավացիորեն գրում է.

«Աղջկա կերպարը, չնայած նրա գեմքը չի երևում, իր դիրքով արտահայտում է մեծ լրվածություն և հուսահատություն: Խոկ նկարելու ձևի մանրակիտությունն ու լուրօրինակությունը այս նկարչի մոտ, վկայում են գեղանկարի մեծ վարպետին»<sup>1</sup>:

Կտավը ձգված է գեղի վեր, մի ձև, որը բնորոշ է նաև վ. Սուրենյանցի հետագա մի շարք ստեղծագործություններին: Եկեղեցու պատի, ինչպես նաև փայտյա դռան պատկերման մեջ, նկարիչն իրեն դրամությում է որպես խոշոր կուլտուրայի, նուրբ զգացողականության տեր արվեստագետի: Պատկերելով ճարտարապետական կոթողի մանրամասները, թվում է, թե նկարիչը հիմնում է իր ժողովրդի բարձր ճաշակով, նրա հոգեկան մշակույթի հարստություններով և դրան է հակադրում այդ նույն ժողովրդի ողբաշի ներկան՝ եկեղեցու առջև ամայի, քարքարոտ նեղ ճանապարհ և այդ ամենի մեջ կենտրոնական դեր գրավող աղջիկը՝ այդ նույն ժողովրդի ոտարորիկ, լացող, փոքրիկ դուստրը:

Թվում է, թե այդ նկարի շարունակությունն է կազմում 1895 թ. Շարժական Գեղարվեստական Ցուցահանդեսների Ընկերության 23-րդ ցուցահանդեսին ներկայացրած «Ուժնակոխ արված սրբություն» նկարը (Հայաստանի Պետական Պատկերասրահ): Նկարի համար նյութ է ծառայել 1895 թ. Վանի Վարագա ս. Նշան վանքի հայտնի կողոպուտը, սակայն նկարիչը, կանգնած լինելով կյանքի ուսումնասիրման ճշմարտացի ուղու վրա, մասնավոր գեղաքի նկարագրումով, կարողանում է հասնել խոշոր ընդհանրացումների: Թիմայի կոնկրետությանը նպաստում են ոչ միայն կոթողի որոշակի պատմական և հնագիտական վերարտադրությունը, այլև Սուրենյանց-արվեստագետի անձնական հուգերը՝ կապված այդ գեղեցերի հետ: Մեր առջև է հին հայկական եկեղեցու սրահը, որտեղից նոր միայն հեռացել է թշնամին: Մոխրագույն քարերը, հավասար ցերեկային լուսը, որը ողողել է կոմպո-


1. В. Михеев—«Двадцать вторая передвижная выставка товарищества передвижных выставок»—«Артист», 1894 г., № 37.

զիցիան, շեշտում են դեպքերին հաջորդած լուսվյունը։ Զուսպ, խիստ սյուների, գեղեցիկ ճարտարապետական զարդաքանդակներով ճարուստ կամարների, ինչպես նաև հատակի քառակուսիների համաշափ ոփթմիկ ֆոնի վրա անկարգ թափված գրքերը, սպանված քահանանայի դիմակը, պոկված վարագույրը — լակոնիկ և միաժամանակ մեծ տրագիզմով պատմում են թշնամու վայրագույրը մասին։ Սուրբնյանց-նկարչի ուշադրությունը չի գրավում սպանված վանականը, եկեղեցու կողոպուտը և աներգումը, որ պարզ երևում է երկրորդ պլանում կիսապոկված վարագույրից, դատարկ սնդուկից։ Նկարի կոմպոզիցիոն կենտրոնում ընկած են դարերի ընթացքում հայ ժողովողի ստեղծած ձեռագիրը, մագաղաթյա մատյանները՝ իրենց գեղարվեստական կատարելութամբ։ Այդ մատյանները նկարում ներկայացված են որպես հայ ժողովողի պայքարով և հերոսությամբ լցված անցյալի, ինչպես նաև գեղի լավագույն ապագան ունեցած մեծ հավատի մարմնացուներ։ Մյուս կողմից, և՛ կողոպուտված եկեղեցու, և՛ սպանված վանականի, և՛ եկեղեցում տիրող անկարգության պատկերումով, Վ. Սուրբնյանցը առաջ է քաշում այն միտքը, որ եկեղեցին, երբ ինքն անզոր է թշնամու հանդեպ, ի՞նչ կարող է անել հազարավոր անտումների ու անապատառների համար։ Սակայն Սուրբնյանցի նպատակը միայն հայկական եկեղեցու ավերման ու կողոպուտի պատկերումը չէ։ Վ. Սուրբնյանցի համար պատմական հուշարձանները ոչ միայն իրենց պատերի տակ կատարվող դեպքերի մասին հուշեր են պահպանում, այլ իրենք ևս անխօնելիորեն կապված են ժողովողի կանքի ամբողջ ընթացքի հետ։

«Հայկական ոգու ամենամնուրը բարերը եղել են նրա (ճարտարապետության — Մ. Պ.) ծնողը և դաստիարակողը։ Նա ազգի հաղթող հանդիսացած դարերում հագել է իր ամենաշքեղ գգեստները և ժողովրդյան սրտերի հետ ցնծացել, իսկ հուսահատության տարիներին դեն է գցել վրայի զարգերը և սպողական է հագել։ Անողոք ճակատագրի բոլոր հարվածները նրա խրոխտ ճակատի վրա ակոսներ են դրոշմել...» — գրում է նկարին իր հոգվածներից մեկում։ \*

Ճարտարապետական հուշարձանի պատկերումը՝ կտուավում, վերանում դառնում է ժողովրդական մեծ ողբերգություն։ Նկարի կոմպոզիցիոն կառուցվածքում առաջնակարգ նշանակություն է ստացել ճարտարապետական կառուցումը։ Վ. Սուրբնյանցը մեծ սիրով և վարպետությամբ է պատկերում ճար-

1 Վ. Սուրբնյանց, «Էջմիածնի վերածնության հարցը» (անտիպ)։



Վ. Առենիանցը (Կանգնած՝ ծախից Յ-րդ) մի խումբ ուստիչների ժամ (Ն. Դավիթին, Վ. Սերյո, Ա. Վասնեցու, Ն. Բաղման).  
Վ. Պերսոլյանցիկոս, Վ. Մելիքյան, Գ. Գրուշյան, Պ. Շեշտավ, Գ. Գրուշյան), 1896 թ., Պահպահություն:



տարապետական կոթողի ամեն մի քարը, որը ժողովրդական վարպետների ձեռքով կյանք է առել և նուրբ ճաշակով հյուսված զարդարանդակով դարձել է խաչքար: Իր ազգային ձևով այդքան գեղեցիկը մարմնավորող այդ զարդարանդակների պատկերմամբ վ. Սուրբնյանցը ձգտում է վերարտադրել հայ ժողովրդի բարձր ճաշակը և հմտությունը: Դրբերի, դռան վիտրաժի, քարերի նյութականությանը վ. Սուրբնյանցը հասնում է կիսալույսերի և կիսաստվերների միջոցով՝ գունանկարչական մի մեթոդ, որը հատուկ է Սուրբնյանցի բոլոր գեղանկարչական գործերին: Նկարում ովհնչ ավելորդ չկա: ընտրվում և պատկերվում է այն, ինչ օգնում է թեմայի դրամատիկական լարվածության զարգացմանը: Նա կարողանում է հասնել ամեն մի իրի յուրօրինակ հնչողականության: Խաչքարերը, գրքերը, սրբապատկերները, պոկված վարագույրը՝ այդ ամենը ծառայում են թեմայի արտահայտչականությանը: Եվ նկարիչը կարողանում է հոգեբանական խոշոր ներգործության հասնել ամրողի միամսնականության միջոցով:

1897 թ., Շարժական Գեղարվեստական Ցուցահանդեսների Ընկերության 25-րդ ցուցահանդեսին, վ. Սուրբնյանցը ներկայացրեց իր «Հոփիսիմեի եկեղեցին էջմիածնի մոտ» աշխատանքը (Հայաստանի Պետական Պատկերասրան): Նկարի բովանդակությունը, ինչպես միշտ, Սուրբնյանցի մոտ պարզ է և մատչելի:

Աշնանային լուսնկա թուլիչ երեկո, ամայի, չոր և քարքարոտ տարածությունն կտավի մեջտեղում վեր է խոյանում դարերի պատմություն ունեցող հայկական ճարտարապետության լավագույն կոթողներից մեկը՝ Հոփիսիմեի տաճարը: Դետնի հետ կոթողը գրեթե նույն տոնով է վերցված, որից վերջինս առավել ամրություն է ստացել: Կոմազողիցին տեսակետից լուսնի հաջող լուծումը կապտագույն երկնքում (լուսինը միակ գունավոր բիծն է) դիտողի ուշադրությունը քննում է տաճարի վրա, իսկ տոնային միամականությունը նպաստում է գետնի և եկեղեցու միակուռ ամրությանը: Առաջին հայացքից ընանկարի ընդհանրությունը թվում է մի փոքր մոռայլ ու խոլ, սակայն երկար դիտելու դեպքում այն սկսում է լուսավորվել և ավելի ու ավելի է գամում դիտողին: Ցուրօրինակ ներդաշնակություն կա պարզ, խիստ ճարտարապետական ձևերի և նրան շրջապատող վայրի բնության համագըրության մեջ, որը պոեզիայով է զցնում այդ աշխատանքը: Հոփիսիմեի տաճարը, գմնվելով կոմպոզիցիայի կենտրոնում, վեր է խոյանում իր հոյակապ գեղեցկությամբ: Մի կողմէց հայրենի բնության պատկերում, որն իր շորությամբ ու ամայությամբ թվում է թե սիմվոլացնում է ավերակ, ամայի դարձած հայրենիքը, մյուս կողմից հայ ժողովրդի հոգմոր կարողություննե-

րի, նրա մշակույթի բարձրարժեք հուշարձանների գովերդում։ Հայ կերպարվեստում հնարավոր չէ մատնանշել մեկ այլ պատմական ընանկար, որտեղ այդքան խոր կերպով զգացվեր հնագույն հուշարձանների օրգանական կապը հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ։ ՇՀոփիսիմեի եկեղեցին» բնանկարը վեհության ու մոնումենտալության հետ մեկտեղ, իր մեջ կրում է ինչ-որ բնարական շռնչ և կատարման ոճով կապվում է նկարչի կողմից հետագայում ստեղծված «Ալհամբրա» աշխատանքի հետ։  
Վ. Սուրենյանցի մյուս բնանկարները հիմնականում էտյուդներ են, կատարված էջմիածնի և Աշտարակի շրջակայրում, աղատ, թեթև բավածքներով և առավել գոմագեղ։

Վարդգես Սուրենյանցը իր թվով շատ քիչ, սակայն բարձրարվեստ բնանկարներում կարողացավ ստեղծել հայուննի բնության ընդհանրացված, էմոցիոնալ և հույսի կերպարմեր։ Նրան առավելապես հաջողվում են ճարտարապետության կապը շրջապատող բնության հետ։ Իր բնանկար-պատկերներում, որոնք միաժամանակ համդես են՝ գալիս որպես նրա ստեղծագործությունների օրգանական մասը։ Վ. Սուրենյանցը կարողանում է իրեն հասունակ ներքին զգացողականությամբ զգալ և վերարտադրել ճարտարապետության կապը շրջապատող բնության հետ։ Իր բնանկար-պատկերներում, որոնք ստեղծվել են բնության անմիջական ուսումնասիրության հիման վրա, նկարիչը հետևողականորեն ձգտում է բնությունը բացահայտել իր ամբողջության մեջ։

1899 թ. Շարժական Գեղարվեստական Յուցահանդեսների Ընկերության 27-րդ ցուցահանդեսում, Վարդգես Սուրենյանցը ցուցադրում է իր ուսամիրամը Արա Գեղեցիկի դիմակի մոտայ մեծակտավ կոմպոզիցիոն աշխատանքը (Հայաստանի Պետական Պատկերասրահ)։

Նկարիչը պատկերել է այն պահը, երբ Արա Գեղեցիկը հեռուստաբար ընկել է կովում, իսկ Շամիրամը մոլեզնած, կատաղած նստել է նրա դիմակի մոտ, ոտքը ոտքին գցած, մազերն արձակ, գլուխը հենած աշ ձեռքին, որը թվում է շրջանակ է դարձել նրա դեմքը ցուցադրելու համար։ Դեպի հեռուն հառած նրա հայացքի մեջ և՛ պարուղյուն կա, և՛ վրեժիխնդրություն, և՛ նոր դավերի փափագ։ Առասպելական թագուհու բնավորության ողջ ուժը և տիրասիրությունը խտացված է նրա մի փոքր առաջ թեքած ֆիգուրայում, ծնուց սեղմած ձեռքին և հեռուն հառած հայացքի մեջ։

Շամիրամի կերպարը բազմիցս դրամատիկական երկերի և կերպարվեստի ստեղծագործությունների նյութ է հանդիսացել։ Սակայն բոլոր գեպքերում էլ հեղինակների նպատակն է եղել պատկերել Արայի ու Շամիրամի սերը, որը կործանում է բերում երկուսին։ Այլ նպատակ է հետապնդում

վ. Սուրենյանցը: Պատմագրի հաղորդաժին նկարիչը հյուսում է նաև Արայի մասին տարածված ժողովրդական առաջպելը, ըստ որի Արա Գեղեցիկը զարթոնքի, գարնան, արգասավորման խորհրդանշի է: Այդ մասին են վկայում նկարի մեջ ասորական արվեստից ներմծված բազմաթիվ դետալները՝ Թևավոր ցուլը (Կորսարադից), Թևավոր ոգին (Լուվրից), Ասուրնազիրապալը յասաման ձոնելիս (Բրիտանական թանգարան), որոնք ասորական արվեստում ունեն նույն վերածնության, զարթոնքի նշանակությունը: Հետաքրքրական է նաև Լուվրում պահպանվող Գիլդամեշի բարեկեֆի ներմուծումը: Հայտնի է, որ Գիլդամեշը ևս հերոսություն, անձնազոհություն և արմնավորող կերպար է ասորական արվեստում: Այդ բազմաթիվ դետալների պատկերումն վ. Սուրենյանցի մոտ ինքնանպատակ չէ: Քաջ ժամոթիվներով համաշխարհային կերպարվեստի պատմությանը և օժոված լինելով ստեղծագործական վառ երևակալությամբ, վ. Սուրենյանցը ներմուծելով բնորոշ և դիպուկ գծեր ու մումենտներ, յուրօրինակ ձևով վերամշակում և զարգացնում է դրանք, ներմուծումներն օժանդակում են առասպելի հետ կապված ժամանակաշրջանի ավելի ճիշտ, կոնկրետ ընկալմանը և լրացնում ստեղծագործության գաղափարական իմաստը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Շարժական Գեղարվեստական Ցուցահանդեսների Ընկերության 27-րդ ցուցահանդեսի պատկերագրդ կատալոգի 70-րդ էջում տեղավորված «Շամիրամը» Արա Գեղեցիկի դիմակի մոտ» աշխատանքի լուսանկարը համեմատելով Հայաստանի Պետական Պատկերասրահում պահպանվող նույն անոնքը կրող ստեղծագործության հետ, պարզվում է, որ այս հանրածանոթ նիարը ենթարկվել է հետաքրքիր փոփոխության:

1899 թ. ցուցադրված նկարում հատկապես ուշագրավ է Արայի պատկերումը: Նույն պատգարակն է, նույն դիրքով Արան պառկած է պատգարակի վրա, սակամ գլխի վրա վարդեր կան, որոնք պատկանում են նրա ճակատը: Այդ ժաղիկներն, անկասկած, վ. Սուրենյանցի մոտ ունեն իրենց ենթատերստը՝ Արան ներկայացվում է որպես հայ ժողովրդի վերածնության և զարթոնքի խորհրդանշի, մեկնարանություն, որ գալիս է Արայի անվան հետ կապված ժողովրդական առասպելից, սակայն երկրորդ տարրերակում այդ վարդերը չկան: Հավանական է, որ առաջին տարրերակն ավարտելուց հետո միայն վ. Սուրենյանցին հայտնի է դարձել, որ վարդերը զարթոնքի նշանակություն ունեն հումանական առվեստագետի իր սկզբունքին, երկրորդ տարրերակը կատարելիս, նկարիչը կտամբ ագատում է այլ ժողովրդի առասպե-

լարանությունից վերցրած դետալից: Փոփոխության է ենթարկում նաև Արայի գլխի տակ գցած կարպետը՝ զարդանկարները դարձնելով ավելի ուժվածիկ ու հանգիստ. Արայի վրա գցած ծածկոցի դիրքը փոխում է, բացելով աջ ձեռքը, ճշտում է նաև որոշ գծագրական անհարթություններ Արայի դեմքի պատկերման մեջ:

Դիտողին հիացնում է նկարչի գոմային նուրբ ճաշակը՝ պատերի թըրթըրուացող կանաչավոան և վարդագույն հին մարմարը, պատգարակի բազմագույն սագակը, ժբատ գույներով տրված հատակի հիասքանչ խճանկարը, որոնք յուրահատուկ մոնումենտալություն են հաղորդում նկարին: Նկարի կոմպոզիցիոն կառուցման ժամանակ, ի հակառակություն ամբողջ նկարի արծաթավուն գամմայի, նկարիչը ձախ կողմի վերևում կախում է թույլ կարմիրով ստացած գորգը, որը, կապվելով Արայի պատգարակի վրա գցած նույներանգ ծածկոցի հետ, հավաքում է ողջ նկարը և ուշադրության կենտրոնում թողնում այդ երկու կերպարները, որպես երկու հակամարտ՝ ուժերի մարմնացում:

Մեծ էր նկարի թողած տպագորությունը: 1901 թ. այն ցուցադրվում է նաև Բաքվում, ապա և Թիֆլիսի գեղարվեստական ցուցահանդեսում, որտեղ նկարի հեղինակն արժանանում է ոսկե մեդալի:

Վարդգես Սուրենյանցը որոնող արվեստագետ էր: Ամենօրյա դեպքերի անմիջական ազդեցության տակ կատարած աշխատանքները նրան չէին բավարարում: Նա հոգվում, ապրում էր այդ դեպքերով, ցանկանում գեղարվեստական կերպարներով ընդհանրացնել իր ժողովրդի ողբերգությունը: Եվ ահա, Սուրենյանցը պրայտումներ է կատարում հայ ժողովրդի պատմության էջերում, որտեղ նրան գրավում է Զարել թագուհու կերպարը:

Ուրբինյան Լևոն Բ. թագավորի դուստր Զարելին (1215—1252) հայ իշխանները, քաղաքական նկատառումներով, ամուսնացնում են Անտիոքի Բոեմունդի որդու՝ Փիլիպոսի հետ: Վերջինս, հայ ֆեոդալների կողմից բանտարկվում և արտաքսվում է երկրից: Զարել թագուհին, անսահման վշտի մեջ, թողնում է աշխարհիկ կյանքը և գնում է Սելլակիա, ուր որոշում է դառնալ վանքի մայրապետ: Կիլիկյան իշխանները հորդորում են Զարելին ամուսնանալ Կոնստանտին Պայլի որդի Հեթումի հետ և մնալ հայոց թագուհի: Զարելն անդրդժելի է: Այն ժամանակ, Կոնստանտին իշխանը, պաշարելով Սելլակիան, խնդրում է Զարելին վերադառնալ Սիս: Հակառակ իր կամքի Զարելն ընդունում է իշխանների առաջարկը:

Որքա՞ն խոր, վիշտ է մարմնավորում իր մեջ Զարելի պատկերումը

վ. Սուրենյանցի էսքիզում (*Հայաստանի Պետական Պատկերասրահ*): Ալաշիկ հասակը, կիսաթիե գլուխը, կրծքին դրած ձեռքը, կիսախուփ աշբերը և վերջապես գեղեցիկ դեմքը, որի համար շրջանակ են դարձել սև, խիտ մազերը, աչնքան անհուսալիություն և անզորություն են արտահայտում, որ թվում է թե հիմա ցած կընկնի, եթե սպասումուն ուրբա հպումը վիճնի նրա մեկնած աշ ձեռքի մատներին: Սպասուհիները ծովնկի են եկել, խոնարհվել իրենց թագուհու առջև, սակայն ում է հարկավոր այդ իշխանությունը, երբ ինը իր զգացմունքների, իր սրտի տերը չի կարող լինել: Որպես բռնության խորհրդանիշ, զնների մոտ կանգնած են սպառազեն երկու զինվորներ, Սառը, միապաղաղ հատակը, միօրինակ կամարները և կանաչ վարդունքունք ծածկված մոտայլ հեռում լրացնում են Զարելի կերպարը, որոնց միջոցով նա դառնում է ավելի արտահայտիչ, զուսպ և ինքնամփոփի: Նկարում իշխող շագանակագույն երանգները միահյուսվելով կանաչի հետ, մերթ դառնում են գեղեցիկ դաշտով վարագույր, երբեմն, որպես սպասուհիների ծաղկագարդ զգեստ, յուրօրինակ գոմային թարմություն ներմուծելով հատակի միօրինակության մեջ: Կոմպոզիցիայի կառուցման ժամանակ նկարիչն առաջնորդվում է ուղղահայաց և զուգահեռ գծերի սկզբանքով: Այդ հարցում օգնության են գալիս նաև նույն ձևով դրված գունային քսվածքները: Դա հատուկ երաժշտականություն է հաղորդում նկարին և միաժամանակ փոքր շափի աշխատանքը դարձնում մեծակտավ ստեղծագործություն:

Ուշագրավ է, որ այդ նկարը մինչև այժմ հայտնի էր «Զարել թագուհու թագաղորությունը» անվան տակ, սակայն նկարում կատարվող գործողությունը և պատկերված դետալները պատմում են բոլորովին այլ դեպքերի մասին:

Նկարի մեջ սպասավորները սևազգեստ Զարելի ուսերին գցել են թագավորական ծիրանին, գլխին դրված է թագը, աշ կողմից նրան է մատուցվում բարձի վրա դրված իշխանության սիմվոլը: Նկարում առկա են թագավորական գահանշանների հիմնական էլեմենտները. նշանակում է Զարելն արդեն թագուհին է: Այդ հաստատում են նաև պատմիշները, որոնց վկայությամբ Զարելին կամքով թագադրել են 1219 թ., այսինքն երբ նա գեռն մանուկ էր: Թագադրությունը պահանջում է նաև հոգևորական բարձր անձի ներկայություն: Հստ մեզ հասած կիլիկյան թագավորական տան ծեսերի նկարագրության, դա չէր կարող նշանադրության արարողություն լինել, քանի որ թագուհին իրավունք չուներ այդ ծեսին ներկա լինել սեազդեստ, առանց սպիտակ երկար քողի: Այս ամենը գալիս են հաստա-

տելու այն միտքը, որ Սուլենյանցը պատկերել է Զարելի վերադարձը Սելևկիայից Սիս, որտեղ թագավորական սրահի նախասենյակում տեղի է ունենում նրա զգեստավորումը, որից հետո նա իր ողջ փայլով պետք է ներկայանար կիլիկյան իշխաններին, նորից գահ բարձրանալու համար։  
«Վերադարձ գահին»—աշա նկարի բովանդակությունից բխող իսկական անվանումը։

Հայ պատմիչները բազմաթիվ էջեր նվիրելով Զարել թագուհուն, շնորհածանում անտարեր անցնել նաև ժողովրդական այն հերոսուհու անվան կողքով, որն իր քաջագործություններով և հերոսական մահով հիմացրել էր աշխատեսներին։ Դա Անեցի Ալժեմիկն էր, որը միանալով իր համարքադարձին հերոսական պայքարին ամիրա Փատումի արշավանքի դեմ, արհամարհելով սովոր, թշնամու նետերը, օրհամական ճակատամարտում զրկվելով նժույգից և զենքից, բարձրանում է քաղաքի անառիկ պարիսպների վրա և իր իսկ վերքերի միջից հանելով նետերը, ետ վերադարձնում թշնամուն անձնազոհության և հայրենասիրության կենդանի օրինակ ծառայելով շատ-շատերին։

1909 թ. Վ. Սուլենյանցն այդ թեմայով կատարած իր աշխատանքը «Կինը ասպետ» (Անի քաղաքի անցրալից)՝ անվան տակ (Լենինականի քաղաքային թանգարան) ցուցադրում է Շարժական Գեղարվեստական ծուցահանդեսների Ընկերության 38-րդ ցուցահանդեսում։ Այժեմիկի խիստ, արտաքինապես հաղթանակ արտահայտող կեցվածքը հեռու է Վ. Սուլենյանցի հոգեբանական լիարժեք կերպարներից, իսկ կոմպոզիցիայի ծանրաբենվածությունը, գեղանկարչական ձևերի մի փոքր կոպտությունը խանգարում են ընդհանուր արտահայտչականությանը, և, անկարսկած, այս ստեղծագործությունը իր մեկնարանությամբ շի սպառում այն նպատակադրումը, որն ունեցել է արվեստագետությունը։

1914—1916 թթ. համաշխարհային պատերազմի օրերին, երր թուրքական կառավարությունը Արևմտյան Հայաստանի բնակչության մեջ մասը բնագնաման ենթարկեց և քշեց Արարական ավագուտները, երր հայ մտավորականների զավագույն ներկայացուցիչները կառավիճարան բարձրացան, երր սրից ու կրակից փրկված ժողովրդի որոշ մասը ապաստան գտավ Արևելյան Հայաստանում, Վ. Սուլենյանցը գալիս է էջմիածին, որպեսզի տեղում պատկերի կոտորածից փրկված հայ գաղթականներին։

1915 թ. հոկտեմբերի կեսերին Սուլենյանցը համում է էջմիածին։ Այդ ճանապարհորդության մասին, բացի մամուլում զետեղված հիշատակու-

թյուններից, պահպանվել են իր՝ նկարչի ռժանապարհորդական տպավորությունները խորագիրը կրող նոթերը<sup>1</sup>:

Դաղթականների կյանքին է՛լ ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով վ. Սուրենյանցը լինում է Օշականում, Երևանում, Աշտարակում և այլուր, որտեղ ներկա է լինում գաղթականների համար ստեղծված դպրոցների բացմանը, ժանոթանում. է նրանց կենցաղին, սովորություններին, զրուցում նրանց հետ, Հայրենասեր նկարիչը հիանում է նրանց իմաստությամբ, ինչպես ինքն է գրում «բարեկազմ», շնորհագեղ» արտաքինով և հատկապես նրանց մեծ ճաշակով ու գույների խոր զգացողությամբ:

Սուր 40-ի հասնող այդ էտյուններում<sup>2</sup> նկարչի ուշադրության կենտրոնում է գոտնվում մարդը և այդ իսկ պատճառով հիմնական շեշտը դրված է դեմքի և ձեռքերի արտահայտչականության վրա: Ճիշտ է, Վ. Սուրենյանցը մեծ վարպետությամբ և մանրամասնորեն պատկերում է նաև նրանց տարագները, հիանալով հայ ժողովրդի ճաշակով, գույների ճիշտ համադրությամբ, սակայն նա այդ կարկատանների և պատառութված հագուստների մեջ հիմնականում տեսնում է մարդուն, վտարանդի հայ գեղջուկին: Աշխատանքները կատարված են մեծ մասամբ տեմպերայով, գուաշով, իսկ երբեմն օգտագործվում է նաև գունավոր մատիտը: Հաճախ տարազները մնացել են միայն դժանկարված՝ մատիտի մի քանի գիծ, սակայն բոլոր դեպքերում էլ գեմքերն ավարտված են: Նկարիչը հիանում է նրանց հոգեկան բարձր կարողություններով, ներքին ուժով, նրանց հոգու խորքում թաքնված անսահման լավատեսությամբ: Դրանք ոտարորդիկ, երբեմն պատառութված զգեստներով, սակայն բարեհոգի ժպիտը գեմքներին կանալը և տղամարդիկ են վասպուրականից, Շատախից, Մոկիից, Ալեքսազից: Ահա վանեցի հերիաթ պատմող նախո քեռին, որը կյանքում կրած տառապանքները դրել էր իր պատմած հերիաթների հիմքում, այժմ թշնամուց հաշածված, հարագատներին կորցրած, ավերակ տոմը հեռու վասպուրականում թողած, եկել-հասել է էշմիածին: Սակայն նրա բարեհոգի, ծիծաղի փոխարկվող հարուստ ժպիտը նրա կերպարը հագեցնում է արժանապատվության խոր գիտակցությամբ, մեծ հավատով՝ լավագույն ապագայի նկատմամբ:

<sup>1</sup> «Արմանակ» 1917 թ., № 9.

<sup>2</sup> Էտյունների հիմնական մասը պահպանվում է Հայաստանի Պետական Պատկերասրանում: Ստույան այդ էշերից մի քանիսը գտնվում են Պատմության թանգարանում, իսկ ՀՍՍՌ-ի ԳԱ-ի Դրամանության և արվեստի թանգարանում<sup>1</sup> 1 աշխատանք, «Նախո քեռի» նկարի կրկնակը: Հայաստանի Պետական Պատկերասրանը վերջին ձեռք բերեց նաև մի փոքր ալբոմ՝ գույնագործատիւններով՝ կատարված գաղթականների էտյուններով:

Վ. Սուրենյանցի էտյուդների ցուցահանդեսը բացվում է 1916 թ. դեկտեմբերին, Պետրոգրադում: Ժամանակակիցների վկայությամբ այդ մասին մամսկում հաղորդում լի եղել, սակայն ցուցահանդեսը եղել է հասարակության ուշադրության կենտրոնում և ոճնեցել բազմաթիվ այցելուներ:

Թվում է, թե վերը նշված ստեղծագործությունները նախերդանքն էին այն աշխատանքի, որը գեռս պետք է ստեղծվեր և իր մեջ պետք է խոտցներ այն մտորումներն ու ապրումները, որոնք ժողովրդասերի մեծ հոգով զգում և ապրում էր հայրենասեր-արվեստագիտ Վարդես Առիքենյանցը:

Էտյուդների այդ շարքով Վ. Սուրենյանցի ստեղծագործական կյանքում սկավում է մի նոր շրջան, երբ նա որոնումներից հետո, անմիջականութեն շփում է ժողովրդի հետ, նախապատրաստական աշխատանքներ է կատարում նոր մեծածավալ կոտավների համար, կոտավներ, որոնց բովանդակության շարժիչ ուժը անկամակած պետք է հանդիսանար ինքը՝ ժողովրդը, սակայն նկարչի հետագա կյանքը շատ կարճ էր նրանց իրացման համար:

Վ. Սուրենյանցի կրանքի վերջին տարիները կապված են Յալթայի հետ: Դեռևս 1906 թ. ստանալով Յալթայի հայկական եկեղեցին նկարազարդելու պատվերը, որը կառուցվում էր ճարտարապետ Տեր-Միքելովի պատվերով, նա գալիս է ծալիք: Ավելի քան 10 տարի նկարիչն աշխատում է այդ որմանկարների էսքիզների վրա՝ նյութական կախման մեջ գտնվելով եկեղեցու կառուցումը նյութապես ապահովող հայ բուրժուազիայից: Պահպանված մի քանի նամակները պատմում են, թե որպիսի լիզությամբ, որպիսի մեծ պարտքի զգացումով է Սուրենյանցը նախաձեռնում այդ մեծ աշխատանքը: Այդ նույն նամակներից պարզվում է թե ինչպիսի անհոգություն են ցուցաբերում պատվիրատումները նկարչի նկատմամբ նախնական էսքիզները դուր շեն գալիս պատվիրատումներին, և նրանք կասկածի տակ են առնում եկեղեցին նկարագարդելու հարցը: Այդ հանդամանքը մեծ վիշտ է պատճառում նկարչին, և նա դառնությամբ գրում է իր նամակներից մեկում.

«Զէ» որ արդեն ավելի քան երեք տարի է ես դրաղված եմ՝ դրանով և համարյա 10 տարի է ապրում եմ այդ գաղափարներով: Պ. Օ. (պատվիրատումներից մեկի անվան սկզբնատառերն են—Մ. Ղ.) լուր տարածեց; որ եկեղեցին նկարազարդում եմ ես և հանկարծ այդ ամենը դառնում եմ լոկ խոստումներ: Բացի դրանից նախագծերի կատարման իմ ծանր աշխատանքները, նրանց շիրականացման պատճառով, կարող են ըմբարձատրվել: Բավկանին հիմար վիճակ է: Նրանք գեղարվեստական ստեղծագործությանը նայում են որպես կոչկակարի աշխատանքի»:

Էսքիզների մեջ դուր չէր գալիս հիմնականում արևելյան այն ոճը, որի մասին գրում է Վ. Սուրբնլանցին ճարտարապետ Տիգրան Առաքելովը և առաջարկում նոր էսքիզներ կատարել, հիմք ընդունելով բյուզանդական, որմանական և վաղ վերածննդի որմնանկարների նմուշները։ Սակայն Վ. Սուրբնլանցի համար որմնանկարների լավագույն օրինակները հիմնականում էջմիածնի եկեղեցու նկարազարդումներն էին՝ կատարված XVII—XVIII դարերում Նաղաշ և Հովհաննեան Հովհանների կողմից։

Յալթայի հայկական եկեղեցու որմնանկարներից ժամանակի հողմերին դիմացել են միայն գմբեթի նկարագարդումները, սակայն ողջ աշխատանքի մասին կարելի է գաղափար կազմել Հայաստանի Պետական Պատկերասրաւում պահպանվող էսքիզներից։ Դրանք հիմնականում երեք կարգի աշխատանքներ են։ Զարդանկարների մոտիվներ, կոմպոզիցիոն աշխատանքներ և դիմանկարներ։

Դիմանկարներում առաքյալները պատկերված են ոսկեգույն խճանկարի ֆոնի վրա, կանաչի և կապույտի երանգներով զգեստները մի փոքր ոճավորված են, նույն ձևով են կատարված ֆիգուրների հետեւ երևացող թևերը, սակայն դեմքերը այնքան ուեալ են, որ թվում է թե դուրս են գալիս որմնանկարների կառուցման պարմանական սկզբունքից։


Յալթայի հայկական եկեղեցու որմնանկարների զարդանկարումներում ի մի է բերված Վ. Սուրբնլանցի այդ բնագավառում կատարած խոշոր աշխատանքը, Գմբեթի և ողջ կոմպլեքսի զարդանկարների հիմնական մոտիվը միջնադարյան ձեռագրերից վերցված բուսական զարդանկարն է։ Արևելյան բազմագույն ծաղիկներն ու ոճավորված կիպարիսները օրգանապես շաղկապվում են սիրամարդերի կլորացված ձևերին, իսկ հագեցված կապույտի, բաց վարդագույնի և ոսկեգույնի բազմերանգ ելեղջները ստեղծում են իմբնատիպ գոմային հարմոնիա։ Նկարիչը խորապես զգացել է որմնանկարների և ճարտարապետության օրգանական կապը։

Որմնանկարները օրգանապես շաղկապվում են բուսական մուգ ոսկեգույն զարդաբանդակին, իսկ հերթաթային հավերժահարս-թոշունները իրենց արժաթագույն կորորիտով ձուլվելով հատակի սպիտակ և պատերի ցածի մասի մոխրագույն մարմարի հետ ստեղծում են մեկ հարմոնիկ միասնականություն։

Ավարտելով աշխատանքները, Վ. Սուրբնլանցը իր առողջության պատճառով մնում է Յալթայում, որտեղ նրան նյութապես օժանդակում է Արվեստի և Հնագույն հուշարձանների պահպանման Կոմիտեն, ինչպես

Նաև նրա արվեստի բազմաթիվ երկրպագուները: Այստեղ էլ, 1921 թ. ապրիլի 6-ին, վախճանվում է մեծ նկարիչը:

Յալթայի հին բնակիչները պատմում են, որ հայկական եկեղեցու ձախ կողմում, թփերի տակ թաղված նկարիչը համեստ, հարգված մարդ էր իրեն ճանաշողների կողմից, որ նա վայր է ընկել եկեղեցու նկարագարդման համար պատրաստված փայտե հարմարանքների վրայից և մի քանի օր անց վախճանվել, որ Կարմիր Կոմիսարը իմանալով անվանի նկարչի մահվան մասին, թաղման ժամանակ շերմ ճառ է ասել և հրամայել է տալ 20 համազարի:



## ՍՈՒՐԵՆԾԱՆՅՈՒ ԳՐԱԾԻԿ

Հայ գրքի նկարազարդման արվեստն իր հարուստ տրադիցիաների դարավոր պատմությունը թուղած անցյալում, հասարակական-քաղաքական անրարինապաստ պայմանների պատճառով XIX—XIX դարերում շունեցավ իր արժանի զարգացումը։ Գրականության արագ աճը XIX դարի 80—90-ական թվականներին առաջնահերթ խնդիր է դարձնում նաև գրքի նկարազարդման հայկական ոճի հարցը։ Պակասում էր նկարիչների այնպիսի մի սերումդ, որը կարողանար իր ժողովրդի գրավոր խոսքին տեսանելի կերպարավորում տալ, նկարիչների այդ սերնդի առաջին ներկայացուցիչը եղավ Վարդգես Սուրենյանցը։ Իր ողջ ստեղծագործական կյանքում նա նկարազարդել և ձևավորել է ավելի քան 35 գիրք և գրական հանդես, որոնցից աննշան մասը միայն չի տպագրվել։

1892 թ. ապրիլի 9-ին մեծ հանդիսավորությամբ տոնվում է Սմբատ Շահազիդի գրական գործունեության 30-ամյա հորելլամբ։ Այն կազմակերպող հանձնաժողովը որոշում է հրատարակել գրողի բանաստեղծությունների հատընտիրը՝ կցերով հորելլարի խոսքը։ Գրքի նկարազարդման գործը հանձնարարվում է Վ. Սուրենյանցին։

Այդ գիրքը «Հորելլյանական տոպրեղարձ» վերնագրով լույս է տեսնում 1893 թ.։

Հին հայկական միջնադարյան ձեռագրերի ուսումնասիրությունները.

ինչպես նաև Սուրենյանցի ներքին մեծ կուտուրան չէին կարող իրենց բարենպաստ ազգեցությունը շոնենալ գործի նկարագարդման նրա արվեստի վրա: Դիտելով այդ գրքում տեղ գտած ավելի քան 30 գլխազարդերն ու վերջնազարդերը, ընթերցողը հիանում է նկարչի ստեղծագործական երևակայությամբ, հատկապես ազգային արվեստի առանձնահատկությունների պահպանմամբ, որը բազմաթիվ ելեզներով հանդես է գալիս գործի էջերում: Նկարագարդումների մեջ հատկապես աշքի են ընկնում գարդատաները, օգտագործված մոտիվները մենք գտնում ենք հատկապես XIII—XIV դդ. ձեռագրերում, սակայն նկարիչը բոլոր գեպերում էլ պահպանում է իր ինքնուրույնությունը: Ինչ վերաբերում է զարդարներին, ապա դրանք հայկական ճարտարապեմությունից (մասնավորապես Անիից) վերցրած մոտիվներ են, որոնք նոր երանգ և նոր ձևեր են ստանում Վ. Սուրենյանցի մոտ: Այդ ամենը լրացնում է լակոնիկ, զուապ, վարպետության համապետարումը (գրիշ, տուշ, գուաշ):

Այդ առթիվ չԱրձագանքում տպագրված իր գրախոսականում 1893 թ. Հովհ. Հովհաննիսյանը գրում է. «Այս գիրքը հայկական գրականության մեջ անտարակուս մի պատվավոր տեղ պիտի բռնե, մանավանդ գեղարվեստական տեսակետից, այդ մեր ամենաշքեղ հարատարակություններից մեկն է: Պ. Վարդգես Սուրենյանցը, որ քաջ ծանոթ է հայկական ճարտարապետության ու գրագրերի մանրանկարներին, ամենանուրը ճաշակի վայել ընտրությամբ զարդարել է Ս. Շահազիզի գիրքը սիրուն մանրանկարներով ու զարդերով, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են գրքի պարունակությանը և ըստ ոճի միանգամայն հայկական են».

Փատահական չէր անվանի բանաստեղծի հիմացմունքն այդ աշխատանքով: Սմբատ Շահազիզի «Հորելլանական տարեդարձը», իր նկարագարդումներով հիմնավորում էր հայ նոր գրականության պատկերազարդման նոր, ուսալիստական ուղղությունը: 1901 թ. լույս է տեսնում «Վշտակ» ժողովածուն՝ Վրթանես Փափազյանի խմբագրությամբ, որտեղ Վ. Սուրենյանցը զետեղում է մի հոդված հայկական ճարտարապետության վերաբերյալ: Նրան են պատկանում նաև ժողովածուի անվանաթերթն ու արտաքին պատկերազարդումը: Հայկական լիրիկական, մի փոքր թախծուտ բնության տեսարան, երեք փոքր բարդիներ, որոնք արտացըլում են համդարտ: Հոսող զուապ գետակի ջրերում:

Մեկ տարի անց «Սուխակ Հայաստանի» երգերի ժողովածուի կազմի վրա Վ. Սուրենյանցը դարձյալ պատկերում է իրեն այդքան սիրելի հայկական բնորոշ բնությունը: Խսկ ֆոնի վրա, ինչպես ինքն է գրում նամակներից

մեկում՝ ո՞ւայ ազիկը զմայլած սոխակի երգից, մտիկ է անում, որպեսզի  
հետո նույն մեղեդին դուրս բերի իր ձեռքի գործիքների վրա»:

Բազմաթիվ են Վ. Սուրենյանցի այդ կարգի աշխատանքները:

Ահա մումանու Մելիքյանի «Աշնան տողերի» նկարազարդումները, որոնց ներքին տրամադրությունից ելնելով, լակոնիկ, զուսպ միջոցներով (ստվարաթղթի բաց շագանակագույն ֆոնի վրա թափվող սև տերևներ կամ թերված, սակայն փոթորկին դիմադրող տերևաթափ ժառեր) Վ. Սուրենյանցը կարողանում է բացահայտել Վահան Տերյանի և մումանու Մելիքյանի համատեղ ստեղծագործության լիրիկական շունչը:

Ահա Ալ. Սպենդիարյանի «Արևելյան երգերի» կազմը, որտեղ նկարիչը աղատություն տալով իր ստեղծագործական երևակայությանը ստեղծել է արևելյան գեղեցիկ զարդարանկարների մի նոր շարք:

Այդ նկարազարդումներին հատուկ է կատարման բարձր տեխնիկան, ներքին էմոցիոնալ մեծ ուժը, արտահայտչական հնարների բազմազանությունը, որոնք բովանդակության պարզ ու մատշելի մեկնաբանման հետ առավել շեշտում են Սուրենյանց-գրաֆիկի ինքնատիպությունը:

1905 թ. Սուրենյանցը Յուրի Վեսելովսկուց պատվեր է ստանում նկարագրագլուխ նրա առաջարանով հաստարակվող Մմբատ Շահարդի բանաստեղծությունների հատընտիրը, որը լույս է տեսնում նույն թվականին «Արմանակ» պօջական համարանիշում, որոնք բովանդակության պարզ ու մատշելի մեկնաբանման հետ առավել շեշտում են Սուրենյանց-գրաֆիկի ինքնատիպությունը:

«Թրքի ողջ արտաքինը ես պատկերացնում եմ Loch moderno. ըստ իսայլ կերպ հրատարակել շարժե—նոր միայն լույս են տեսել Մետեղինկյան երեք պիեսների երեք գրքույկները, որոնք բեմադրվել են Գեղ. թ.: ես Զեղ կիսնդրեի ուշադրություն գարձնել թղթին, շափին և ընդհանրապես ողջ հրատարակության վրա (հրատարակել է Սարգիսը) և ես իմ կողմից առաջարկեցի Զեր հրատարակությանը ևս տալ նույնպիսի արտաքին, այսինքն բոլոր էջերը օժտել գիտազարդերով (թվերը), մի քանի գարդատառեր, վերնագրի համար շրջանակ (առշեւում) և ովերջա, իսկ ինչ վերաբերվում է նկարազարդումներին, ապա սև թղթի վրա՝ դիմանկարը, իսկ մնացած նկարազարդումները (նույնպիս և առանձին նշանակածները) փակցնել մոտավորապես նույնպիսի թղթի վրա։ Ահա այսպիսի պայմանների դեպքում կարելի է հուսալ, որ հրատարակությունը կհաջողվի լրիվ։ Հետագայում, նորից անդրադառնալով այդ հարցին, Վ. Սուրենյանցը գրում է.

«Դուք անկասկած կուահեցիք, թե ես ինչպես եմ պատկերացնում նկարագրումները, ասելով Loch moderno: Զէ՞ որ ես այդպես էլ ըմբռնում էի, որ դա կլինի մոդեռնացած ազգային-արխալիկ ոճ, ինչպես այժմ ընդունված է անել ողջ գեղարվեստական աշխարհում... Առանձին նկարագրագումները (ոչ տեքստում), պետք է լինեն երկգույն, ինչպես սարլինյան հրատարակությունում, (նկատի ոմակ Մ. Մետեղինի երեք պիեսների հրատարակությունները, իր նկարագրագումամբ — Մ. Ղ.): Գնայած նրանք միագույնի տպավորություն են թողնում, բայց փոխարենը հիշեցնում են թանկարժեք գրավյուրաներ»:

Մերատ Շահազիզին նվիրված այդ գրքի առաջին էջի վրա դարձյալ մեղմ, թախծուտ-լիրիկ բնանկար է, փոքրիկ գետակով, ափին՝ այգիների մեջ կորած հայկական գյուղով, աջում՝ գեղի վեր խոյացող երկու բարդիներ և այդ ամենը վերցրած հայկական մանրանկարներից և որմնանկարներից բնորոշ գետալիների մոդեռնացված երիզի մեջ: Հատունտիրի առաջին էջը, որտեղ գետեղված է «Առ. ընթերցող» ձոնը՝ բաղկացած վեց տողից, հայկական ձեռագրի խորան է, որով թվում է թե նկարիչը սիմվոլացնում է բանաստեղծի հույզերն՝ ու մտորումները, գրչով մղած նրա պայքարը, ժողովրդական գրականության ստեղծման համար:

Գլխազարդեր հանդիսացող զարդանկարների հյուսվածքը ազգային բնորոշ առանձնահատկությունները պահպանած բուսական և երկրաշափական սկզբնազարդեր են, որոնք հիացնում են դիտողին արվեստագետի մտեղծագործական անսպառ հնարամտությամբ: Չորս ներդիրներում (կատարված երկու գույնով՝ սև և շագանակագույն) նկարիչը հեղինակի հետ միասին հիանում է կովկասյան հրաշագեղ բնությամբ, Երդ դարի հայ կանանցով, որոնք իշխում են գյուղից գեղի իրենց ծաղկալի դաշտերը. այստեղ երիտասարդությունը շաղկապված է բնության գեղեցկության հետ, իսկ կանայք համակված են ներդիրն հպարտությամբ: Անկասկած Վ. Սուրենյանցի մոտ Մերատ Շահազիզի գրքի նկարագրագուման ժամանակ է առաջացել «Հայ կտնանց ելքը եկեղեցուց» կոմպոզիցիայի կատարման մտահղացումը: Մեկ այլ էջի վրա դրանց է հակադրված քաղաքակրթված հայութին, որն իր մոտ եկած և անտուն ժողովրդին օգնություն հայցող աշուղներին է դիմում ասելով. «Չենք ճանաշում ձեզ»:

Երբ համեմատում ենք Մերատ Շահազիզի 1893 թ. «Հորելլանական տարեկարձի» և 1905 թ. այս հրատարակությունը ակնհայտորեն զգում ենք Սուրենյանց-արվեստագետի հատումացումը, արտահայտչական միջոցների կատարելագործումը և, միաժամանակ, նկատում նկարչի նախասիրությունը

դեպի մողեռն ոճի որոշ էլեմենտների ներմուծումը։ Դա հատկապես ուժնու երևան է գալիս արևմտա-եվրոպական գրողների երկերը ձևավորելիս։

Կանգնած լինելով իր ժամանակի հայ առաջավոր ինտելիգենցիայի շարքերում, Վարդպես Սուրբնյանցը բժիշկ Վահան Արծրունու հետ միասին խորշոր աշխատանք է տանում ժողովրդական լայն խավերի մեջ առողջապահության վերաբերյալ գորույկներ տարածելու գործում։ 1902—1903 թթ. նա ձրի նկարագրողում է բժշկի հրատարակած «Առողջապահիկ թերթիկ» հանդեսում «Բժշկի զրույցները» գորույկները, և այդ նա անում է այն ժամանակ, երբ ինչպես պարզվում է ընկերներին գրած նամակներից, գտնվում էր ժանր նյութական պայմանների մեջ։

1901 թ. Բաքվում բացած առաջին անհատական ցուցահանդեսը ոչ մի նյութական և բարոյական օգնություն չի տալիս նկարչին։ «...Պատկերներս այնքան են հավանում, որ ամենը սրտանց ափսոսում են, որ մեծ-մեծ լուսանկարներ նոցանից հանել չեն տված — բոլորը կծախվեին (այսինքն լուսանկարները)։ ...Հանդեսի մուտքը 20 կոպեկ է և հարուստ հայերից շատերը գիշերն են գալիս, որպեսզի այդ 20 կոպեկը վճարելուց աղատվեն։ ...Պատկերներիս մեջը ամենաբիշը տպագլուրություն գրեթեցին նոքա, որոնք որևից գաղափարի են ծառայում և ընդհանրապես բովանդակություն ունեցող պատկերի վրա նայում են մի կերպ, ծաղրով...» — գրում է Վ. Սուրբնյանցը 1901 թ. մայիսին Ալ. Մատուրյանին։

Բաքվում վաճառված մի քանի նկարները, ինչպես նաև Թիֆլիսի Գեղարվեստական ցուցահանդեսում տսկե մեծ մեղալի արժանանալը ունելով չեն նպաստում նրա վիճակի բարեկալմանը, և ահա 1902 թ. հունվարի 8-ին հուսահաղած արվեստագետը նորից գրում է մտերիմ բարեկամին։ «Պատկերները անշուշտ այժմ այն աստիճանի շղերիս վերա պիտի ազդեն, որ ես նոցա վերց ի վերջո պիտի հնոցում վառեմ — հիմա (ուշադրությամբ լսիր) արդյոք մի հնարք չկա՞ ր փրկելու, ոչ պատկերները, այլ նոցա նկարողին — և մի կերպ պարունիդ հասկացնել, որ համարյա շրջանակների գնով եմ ժախելու ոսկի մերալի արժանացած պատկերները»<sup>1</sup>։

Սակայն կյանքի նյութական և բարոյական հարվածները չէին կարողանում վհատեցնել արվեստագետին և ահա 1905 թ. Վ. Սուրբնյանցը ձերնամուին է լինում հայկական, ժողովրդական հերիաթների նկարագրումներին, որոնց առաջին էջերը նա ցուցադրում է 1906 թ. Պետերբուրգում, կետնարդու դավինշիի անվան միության ջրաներկերի երկրորդ ցուցահանդեսում։

<sup>1</sup> Պարմեր—Մոսկվայի հարուստ վաճառական Եղբարյանն է, որի մոտ մինչև 1901 թ. աշխատել է Ալ. Մատուրյանը։

Սուրենյանցն այդ նկարագարդումները տարիների ընթացքում համալրում էին: Մեզ են հասել ու Արևելատն ու օձամանուկը», «Օխ վայր», «Իմաստում օձը», «Մոխրոտը», «Դանիկ ախպերը» հեքիաթներից էշեր, որոնք Սուրենյանց-արվեստագետի դեմոկրատական հայացքների լավագույն արտահայտություններն են: Հայկական ժողովրդական հեքիաթներում Սուրենյանցին առաջին հերթին հրապուրում են ժողովրդի խոր իմաստությունը, լավագույն, երջանիկ ապագայի հանդեպ ունեցած հավատը, նրա լավատեսությունը:

Պատահական չէ, որ 1914 թ. համաշխարհային առաջին պատերազմի օրերին, երբ հայ ժողովրդը թուրքական կառավարող շրջանների իմաստերիալիստական քաղաքականության հետևանքով մեկ անգամ ևս ենթարկվեց հաւածանքի և ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար բռնեց օտարության ուղին, Վ. Սուրենյանցը Շարժական Գեղարվեստական Յուցահանդեմների Ընկերության 45-րդ ցուցահանդեսում առանձին էջով ցուցադրում է «Հայկական ժողովրդական հեքիաթներ»-ի շապիկը ... Անժայր, ամայի տարածության մեջ, ցուցը ձեռքին, մազերն արձակ թափած, հայացքն ուղղած հեռուները, քայլում է մի հայ կին: Ո՞ւր է գնում նա, ինչո՞ւ, ինքն էլ շգիտե: Որքան վիշտ, որքան կսկիծ կա նրա դեմքին: Դարավոր պանդիտության տարագիր վիճակն է այդ, օտարության մեջ թափառող հայ ժողովրդի մարմնացումն է նա, նրա խտացրած գեղարվեստական արտացոլումը: Մեծ արվեստագետին հատու, վարպետությամբ, արտահայտչական սուլ միշոցներով, Սուրենյանցին հաշողվել է արտահայտել նրա ամբողջ ներքին էությունը:


Ժողովրդական հեքիաթների նկարագարդումների էշերը կատարված են լակոնիկ, սակայն արտահայտիլ են և ներգործող: Հատկապես այս աշխատանքներում հանգստ է գալիս Սուրենյանց-գրաֆիկի բարձր կուլտուրան, զուապ հաշակը, որով նա մնում է անկրկնելի մինչունվագիրն հայկական արվեստում:

Այն միտքը, որ իր ժողովրդի կյանքն է նրան մնունդ տալիս հեքիաթների նկարագարդման համար; կարելի է հաստատել թեկուզ մեկ օրինակով:

Եետրոգրադում 1915 թ. փետրվարին կազմակերպվում է օգնության երեք օրվա հավաք՝ Թուրքիայում տուժած հայերի օգտին: Այդ օրերին մի քանի հետաքրքիր պլակատներ է կատարում նաև Սուրենյանցը: Պլակատներից մեկում պատկերված է ուկրու դեմքով նիշար մի պատանի, որի ծայրը աստիճանի քաղց արտահայտող հայացքը, հյուծված կերպարանքը գամում է դիտողին: Պլակատներից մյուսը, որը հայտնի է «Պետրոգրադի՝ հայերին» անվան տակ, անկասկած հավանել է նաև ինքը նկարիչը, որովհետեւ, երբ 1915 թ. պատերազմի զոհերին օգնող ուսւ գրողների ընկերության խորհուրդը դիմում



Սալոմ. 1907 թ.



է Սուրենյանցին, որպեսզի հրատարակվելիք բարնգործական ալմանախին տամաթի փորք էշ հայկական թեմաներով կատարված մոտիվներով, նկարիչն ուղարկում է այդ նկարը, որը ոռու անվանի նկարիչներ են. Ռեպինի, Վ. Մակովսկու, թ. Կուտառդիմի և ուրիշների աշխատանքների հետ տպագրվում է «Невский альманах жертвам войны—писатели и художники» ժողովածում: Նկարի հետևում կարդում ենք հեղինակի ձեռքով մակագրված մի հետաքրքիր տող. «Վերածել հերիաթիա: Դա խոսում է այն մասին, որ հայկական հերիաթներում տեղ գտած ժողովրդի վիշտը, տարագիր վիճակը նկարիչը տեսնում էր նաև իր ժողովրդի առօրյալում, սակայն դա չէր բացառում այդ նույն հերիաթների լավատեսության, ապագա ազատության հույսի ճառադայթների արտացոլումը Սուրենյանցի ստեղծագործություններում, քանի որ այդ գիծը հատուկ էր նաև Սուրենյանց-բազարցուն և արվեստագետին: Եաւ բնորոշ է երվանդ Շահազիդի հիշողությունների միջոցով մեզ հասած Սուրենյանցի դասնությամբ լի բացականչությունը. ևս շատ եմ թափառել օտար հորիզոններում, տառապել եմ, հոգնել: Հավերժ բնություն, արդյոք մի օր լուս աստղ կծագի մեր հարազատ երկրում, որ կարողանանք խաղաղ, անգորդ մեր հացով ու ջրով ապրել, մեր մաքուր օդով շնչել, մեր հուզերով շիանալ, մեր հարալ աշխատանքով հագնենալ. մեր տառապանքին արդյոք վերջ կը մինի՞»:

Վ. Սուրենյանցի ամելի քան 15 տարիների ընթացքում կատարած «Հայկական ժողովրդական հերիաթներ»-ի նկարազարդումները իրենց խոր բովանդակությամբ, բարձրարվեստ կատարմամբ մնում են որպես մինչառվետական շրջանի հայ դրդի նկարազարդման արվեստի լավագույն նմուշներից մեկը:

Ոռու գրողներից Վ. Սուրենյանցին հրապուրել են հատկապես Լ. Տոլստոյը, Ա. Պուշկինը և Մ. Լերմոնտովը: Ա. Պուշկինի «Գնչուներ» պոեմի հիման վրա նա կատարում է Զեմֆիրային պատկերող մի աշխատանք: Լ. Տոլստոյի «Հաջի Մուրադի» համար կատարած նկարազարդումները նա ցուցադրում է Շարժական Գեղարվեստական Ցուցահանդեսների Ընկերության հերթական ցուցահանդեսում: Ինչ վերաբերում է Մ. Լերմոնտովի «Իշխանուհի Մերի» վեպի համար 1914 թ. նրա ստեղծած Պելորինի և իշխանուհի Մերիի գծանկար-դիմանկարներին, որոնք պահպանվում են Լենինգրադի ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ոռու Գրականության ինստիտուտում մի փոքր չոր հն և ոչինչ շեն ալիւացնուա Սուրենյանցի ստեղծագործությանը:

Ոռու գրողների երկերի նկարագարդումներից Վ. Սուրենյանցի ստեղծագործության մեջ ուրույն տեղ են գրավում Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի շա-

տըրվանը՝ պոեմի նկարագարդումները (1899 թ., Սոսկվա: Հրատ. Կներել և Գրուման), տրոնք յուրատիպ են իրենց գաղափարայնությամբ և կատարման վարպետությամբ: Նկարագարդումները, ինչպես ասացինք, նվիրված են Հովհաննես Այլվազովսկուն:

Պուշկինի անմահ պոեմը ստեղծագործական անսպառ աղբյուր է հանդիսացել ուստի նկարիչների համար, որոնց սակայն հուզել է Արևելքի երեակարական կյանքն իր առասպելական շքեղությամբ, հարեմների խորհրդավորությամբ: Այլ ուղղությամբ էր աշխատում Վ. Սուրենյանցի ստեղծագործական միտքը:

Զեռնարկելով պոեմի ձևավորմանը (1897 թ.) Վ. Սուրենյանցը կատարում է նկարների մի ամբողջ շարք, ավելի քան 70 նկարագարդում, որոնք իրենց բարձր արժեքով կարող են առանձին գեղարվեստական ալբոմ կազմել:

Դեռևս 1885—1886 թթ. պրոֆ. Վ. Ա. Ժուկովսկու արշավախմբի հետ Պարսկաստանում եղած ժամանակ, Վ. Սուրենյանցը հնարավորություն է ունենում Սպահանի, Շիրազի և Մազանդարանի նահանգներում անմիջականորեն շփվելու ժամանակի հետև և ծանոթանալու տեղի ազգարնակշղության նիստուկացին, սովորություններին, իսկ Վ. Ա. Ժուկովսկու կնոջ՝ վառվառա Ալիքսանդրովնայի, ուսումնասիրությունների շնորհիվ նաև կանանց կենցաղին վերաբերող հետաքրքիր տեղեկություններ ստանալի: Ըստ բանաստեղծ Ալ. Մատուրյանի վկայության, Վ. Սուրենյանցը մի քանի ամիս ապրել է Բախչիսարայում, որպեսզի տեղում ուսումնասիրի պոեմի հետ կապված վայրերը և դեպքերի պատմությունը:

Վ. Սուրենյանցի նկարագարդումների մեջ հիմնականը հարեմի շլացուցիւ փայլը, պաշտօտի ճախությունն ու շոայլությունը չեւ: Ասւրենյանցին առաջին հերթին հուզում է պոեմի հիմքում ընկած սոցիալական մոմենտը, Նրա ուշագրության կենտրոնումն է հարեմի գեղեցկուհիների անազատ, գերության մատնված կյանքը, որը վազօրոք թոշնում է և դալիանում: Եղ առ չղ պատմելով գեղեցիկ լեհուհու պատմությունը, որի համար Գիրեյի սերը, ինչպես նաև հարեմի շքեղությունը համարժեք են գերության, նկարիչը կարողանում է համել խոշոր ընդհանրացումների: Մտեղծագործողին հատուկ ներքին զգացումով Վ. Սուրենյանցը կարողանում է ընտրել դիապուկ տեսարաններ («Մարիայի առևանգումը», «Հարեմի կանայք և ներքինին և այլն), հոգեբանական բարդ մոմենտներ («Գիրեյը», «Մարիան աղոթելիս», «Եատրվանի մոտ») և այդ ամենն այնպես արտահայտիլ և հետաքրքիր վերաբերել, որ նկարագարդումների ամեն մի էջը լրացնում է անմահ բանաստեղծի զուսպ տողերի տակից առկայծող խոր զգացմունքը: Թվում է գրքի լեյտմուտիլն է:

կազմում անվանաթերթը, որտեղ Վ. Սուրենյանցը պատկերման սուլ միջոցներով (տուշ, ծայր, վրձին) արցունքի շատրվանի կողքին նստած լացող աղջկա ֆիգուրայով արդեն ընթերցողին հաղորդում է պոեմի հիմքում ընկած խոր ողբերգությունը: Այդ նկարազարդումներում կատարման ազատությունը զուգակցված է գծանկարի պլաստիկականության և թեթևության հետ, երբեմն որոշ էշերի բնորոշ է որոշ արտաքին գեղեցկություն, քաղցրություն:

«Բախչիսարայի շատրվանը» մի երկ է, որը նկարչին հնարավորություն է ընձեռում հիմնական տեսարաններից բացի իր ստեղծագործական երևակայությանն ազատություն տալ նաև սկզբնազարդերի և վերջնազարդերի կատարումով: Նրանց կատարման ժամանակ նկարիչը բազմազան ձևերով օգտագործում է պարսկական հարուստ զարդանկարչությունը, հետաքրքիր տեսարաններ Բախչիսարայից, միաժամանակ պահպանելով տեղի բնության տաք շունչը: Նա պատկերում է պալատի նարտարապետությունը, կենցաղային իրերը, որոնք այժմ էլ պահպանվում են Բախչիսարայում, վերարտադրում է ժամանակի տարագները, իսկ այդ ամենը օգնում են պոեմի բազմակողմանի ընկալմանը:

Մարգկային հույզերի, զգացմունքների և ապրումների ոեալ վերհանման, ինչպես նաև կատարման վարպետության մեջ էր այդ նկարազարդումների լայն տարածում ստանալու գրավականը և պատահական չէ, որ նրանց մեծ մասը հանձնարարվում է մոգական լապտերով ցուցադրել ժողովրդական լսարաններում կազմակերպվող ընթերցանությունների ժամանակ, իսկ Պուշկինի ծննդյան 100-ամյակի հորելյանի առթիվ ուսա գրասերների ընկերության նախաճեռնությամբ կազմակերպված ցուցահանդեսում նրանք գտնվում են այցելուների ուշադրության կենտրոնում:

1900—1910 թթ. Վ. Սուրենյանցը, հրատարակիչ Պ. Սաբլինի պատվերով, կատարում է արևմտաելուպական մի շարք գրողների ստեղծագործությունների նկարազարդումներ, որոնցից հատկապես ուշագրավ են Մ. Մետեղյանի «Կույրերը», «Այնտեղ Ներսում», «Անկոշը» պիեմների, բելգիական սիմվոլիստ գրող Ժորժ Ռուդենբախի «Մեռած Բրյուգեն» պատմվածքի, շվեդուհի գրող Սելմա Լաբերլյոֆի ներկերի ձևակիրումները: Այդ աշխատամքներում Վ. Սուրենյանցին հաջողվում է ներքին տրամադրությունից ելնելով ընդհանրացումներ կատարել և կատարողական լակոնիկ միջոցներով հասնել էմոցիոնալ ուժեղ ներգործության:

Մ. Մետեղյանի «Կույրերը» պիեսի կազմի վրա նեղ երիզով սկանդինավյան զարդանկարի ֆոնում լակոնիկ գծանկարով ներկայացված է ձեռ-

Նափայտը ձեռքին կույր աղջկա ֆիգուրան։ Սպիտակ ֆոնի վրա գծագրված նրա ձեռքը, որը թվում է թե կախվել է անսահման անորոշովից յան մեջ, կամ գրքի առաջին էջում գլխազարդ դարձած իրարից օգնություն հայցող, մթության մեջ խարխափող կուրերի ֆիգուրաները և քոնի վրա, այնքան ճնշող, ժանր տպավորություն են գործում, որ դառնում են յուրօրինակ բանալի Մ. Մետեղիսկի պիեսի սիմվոլիկայի խմաստն ըմբռնելու համար։

Ժորժ Ռոդենի բարձրագույն գործի կազմի բաց շագանակագույն ֆոնի վրա այդ իրենց ձևը կորցրած տերևները, որոնց ցրում է քամին, թվում է թե լողում են տիեզերքի մեջ և գեղանկարչական կերպարներով ավելի են շեշտում գորոշի սիմվոլիկ կերպարները։ Ապա Սելմա Լագերլյոֆի գրքերի կազմը՝ այդ իրար շաղկապված վարդերը կամ լեռների տրվագծերի ֆոնի վրայով անցնող եղնիկների հոտը, անշափ համապատասխանում են բանաստեղծուհու երկերում ոռմանտիկ կյանքի նկարագրությանն ու նրա իդեալականացմանը։

1905 թ. Վ. Սուրենյանցը ձևավորում է Ռոբերտ Միզերանի «Ժամանակակից անգլիական գեղանկարչությունը» գիրքը։ Գրքի կազմի վրա նա տեղավորում է նշանավոր պրեռաֆայելիտ (գեղարվեստական հոսանք Անգլիայում, որը սկիզբ էր առել *XIX* դարի կեսերին) Բյորն Հոնսի «Ալկետում» նկարից հրեշտակի ծանր, կապարանման, պատից գամված ֆիգուրան, որին լրացնում են ոճավորված շոր, ցցուն տառերը, ինչպես նաև գրքի կազմի համար շրջմանակ դարձած շղագարորեն իրար խառնված անորոշ գծերից կազմված զարդանկարները։ Վ. Սուրենյանցի մոտ հետաքրքրությունը գեղի պրեռաֆայելիտները սկսվել էր 1900—1901 թվականներից, որը երևում է այդ տարիներին կատարած նրա մի շարք սրբապատկերներից։ Այդ աշխատանքներում նա ներմուծում է որոշ տարրեր, որոնք պնորոշ են արվեստի այդ հուսանքին հարող նկարիչների ստեղծագործություններին։ Դրա հետաքրքիր օրինակներից է այժմ էջմիածնի եկեղեցուալ պահպանվող Սուրենյանցի «Ալկետում» նկարը, որը կատարված է պրեռաֆայելիտների արվեստին հատուկ նախասիրությամբ։ Եվ դա, պատահական չէ։ Ռոբերտ Միզերանի գրքի բովանդակությունից էր բխում կազմի ձևավորման այդ կարգի մեկնաբանումը, իսկ սրբապատկերների կատարման ժամանակ հիմք էին հանդիսանում վերոհիշյալ նկարիչների ներմուծման միստիկ, վերացական և պիմվուլիկ կերպարները, որոնք իրենց հետ բերում էին նաև կատարման ոճավորում, մի հանգամանք, որը խորթ էր Սուրենյանցի կյանքով լցված գեղարվեստական բարձրարժեք կտավներին։ Այդ իսկ պատճառով էլ պրեռաֆայելիտների արվեստի հանդեպ ցուցաբերած Վ. Սուրենյանցի նախասիրությունները

մնացին միայն պատվերով կատարված մի քանի սրբապատկերների սահմաններում:

Արևմտանվողական գրողների ստեղծագործությունների համար կատարած Վ. Սուրենյանցի նկարազարդումներից հատկապես ուշագրավ էն անգլիացի նշանավոր գրող Օսկար Ուայլդի երկու հեքիաթների («Երիտասարդություն» և «Արքայազմտեր ծննդյան օրը») նկարազարդումները, որոնք կատարվել են հրատարակիչ Վ. Պ. Սարլինի պատվերով և հրատարակվել 1909 թ.:

Վարդգես Սուրենյանցի տեսրերում պահպանված գրանցումներից պարզվում է, որ նա նպատակ է ունեցել նկարազարդելու Օսկար Ուայլդի 18 հեքիաթները: Մետեղինկի, լագերլուֆի պրատումներից հետո նրան հուղում է Օ. Ուայլդի հեքիաթների հիմքում ընկած սոցիալական մոմենտը, որի մասին նա արտահայտվել է իր զրույցներից մեկում: «Դուք գիտեք միայն Դորիան Գրեյի պորտրետ» հեղինակ Օսկար Ուայլդին,— ասում է նկարիչը, — սակայն գոյություն ունի նաև «Մեդինդյան բանտի բալլագը» ստեղծագործության հեղինակ Օսկար Ուայլդը, որին մենք քիչ ենք ճանաչում: Անկասկած, Ուայլդի հեքիաթների հիմքում ընկած սոցիալական մոմենտը գեռնա շատ հեռու էր պայքարի կողից, այնքանով, որքանով այդ մոտիվները նրա ստեղծագործության մեջ մուտք են գործում «Ֆարիանական ընկերության» համախոհների հետ ունեցած նրա շփման հետևանքով:

Ուայլդի «Պատանի թագավորը» հեքիաթի համար կատարած Վ. Սուրենյանցի նկարազարդումը ներկայացնում է հոգնատանջ, դալուկ պատանի ջուրակներ, որոնց ուրվագծերը մի քանի սպիտակ շտրիխներով նշմարվում են մութ նկուղում, թիապարտության ենթարկված ստրոկներ, որնք դրսի աշխարհի, հետ իրենց կապը կտրած լինելով հանդերձ, կյանքի գնով, ծովի հատակից գերմարդկային ճիգով աղամանդներ որսալով գոհացում են տալիս աղատների ագաճությանը: Այստեղ ագաճության և մահվան պայքարի պատկերումն է, որնք իրենց թևերի տակ են առել ողջ աշխարհը: Այդ ամենն իր փոքրիկ հոգով զգում է երիտասարդ թագավորը, որը միակն էր իր շրջապատում, որ տեսավ և զարհութեց այդ ամենից: Շուրջը նրան չեն հասկանում, չեն կարողանում ըմբռնել նրա ապրումները, և նրան է վշիճակված կրել փշե պատակը: Այդ են սիմվոլացնում կազմի վրայի իրար հյուսված փշե պսակները, որոնք կրկնվում են նաև մյուս էջերում որպես սկզբնագարդեր: Հետաքրքրական է, որ երիտասարդ թագավորի երազները ևս Վ. Սուրենյանցը մեկնարանում է որպես ուսականություն, պահպանելով նկարազարդման ընդհանուր ոճը: Դա պետք է բացատրել նրանով, որ նկարիչը չի սահ-

մանափակվում հեքիաթի շրջանակներում, այլ ելնելով Օ. Ռայլզի սոցիալական գաղափարախոսությունից, հեքիաթին տալիս է յուրօրինակ սոցիալական երանգավորում: Գծանկարում ևս չկա այն հանգստությունը, որը հատուկ է Վ. Սուրենյանցի նկարազարդումների մեծ մասին: Գծերը դառնում են զիգզագանման, կատարման մոդեռն ոճը իր հետ բերում է ինչ-որ ներքին անհանգստություն:

Իսկ որքան ճաշակ և հնարագիտություն է ներդրել նկարիչը «Արքայադմտեր ծննդյան օրը» հեքիաթը նկարազարդելիս, օգտագործելով իսպանիա կատարած իր ճանապարհորդությունից ստացած տպավորությունները, իսպանական արվեստի ուսումնասիրությունը:

Սուրենյանցը սեղմ, առող միջոցներով է պատկերում արքայադմտեր ծննդյան տարեդարձի առթիվ կազմակերպված հանդեսի տրամադրությունը: Արքայադմտատրը, որը նման է Վելասկեզի մենինաներին, փոքրիկ սուսերամարտիկներն ու ցլամարտիկները, ցիտրաների վրա նվագող գեղեցիկ եփիպտուհիները, որոնց էջի մեջ միաբնակած միօրինակ շարքը յուրօրինակ երաժշտականության հետ ինչ-որ թախիծ են բերում իրենց հետ, և վերջապես այդ փոքրիկ տղան, որը «Հանդպնել է» այդպիսի տգեղության հետ միասին սիրու ունենալ և, դարձյալ գրքի կազմի վրա, կապանքների միջից երևացող իսպանական գեղատեսիլ բնությունը մարմնավորում են գրական ստեղծագործության ողջ էությունը: Այդ նկարազարդումներում հատկապես հիացնում է Սուրենյանց-գրաֆիկի ճաշակը, ընտրված դիպուկ, բնորոշ տեսարանները, նրանց պարզ և մատչելի պատկերավորումը, առանձին էջերից բացի բազմաթիվ սկզբնազարդերն ու վերջնազարդերը, որոնք օրգանապես կապվում են ընդհանուրի հետ:

Այս գրքերի ձևավորումների մեծ մասը կատարվել է 900-ական թվականներին, մի շրջան, երբ Վ. Սուրենյանցը ապրելով Պետերբուրգում և Մոսկվայում, հասարակական գործունեությամբ անմիջականորեն կանոնավաճակ էր բազմաթիվ արվեստագետների հետ: Անկասկած է, որ այդ շրջանի նկարազարդումներում նկարիչը չէր կարող հեռու մնալ կերպարվեստում սկիզբ առած որոշ հոսանքների ազդեցությունից, ուստի նա կրեց մասնավորապես «Միք իսկուստվա» գեղարվեստական խմբակցության աղդեցությունը, որը նրա մտու հիմնականում արտահայտվում է սիմվոլիկայի, արտաքին ոճավորման հարցերում, սակայն հեռու է մնում նրանց հիմնական սկզբունքներից, որոնք խորթ էին իր ուսալիստական աշխարհը մրանմանը: Այդ մասին են վկայում «Արմենական պոետ Սմբատ Շահ-Ազազ» գրքի ձևավորման առթիվ Յու. Վեսելովսկում հասցեագրված Վ. Սուրենյանցի նամակները:


«Միր իսկուստվախ» նկարիչները, իրենց առջև դրել էին գծանկարի պաշտամունքի, ինչպես նաև նշգրիտ, անբասիր, արտահայտիլ գծին հասնելու խնդիրը։ Դրանով նրանք արձագանքում էին արևմտաեվրոպական որոշ հոսանքների և հատկապես անգլիական նոր նկարչությանը՝ պրեռաֆայելիտներին։ «Միր իսկուստվախ» նկարիչների մոտ նրբաճաշակությունն ու գծանկարի կատարելությունը ընթանում էին վերացական գեղեցիկի առաջնահրթությանը զուգընթաց, որն իր էությամբ խորթ էր առաջադեմ դեմոկրատական արվեստին։

Վ. Սուրենյանցն ամենայն վարպետությամբ է տիրապետում գրչի տեխնիկային։ Նա սեի ու սպիտակի համադրություններով, միաժամանակ օգտագործելով թղթի ֆակտուրան, երբեմն էլ գուաշի սահմանափակ գույները, կարտոզանում է հասնել մեծ արտահայտչականության։

Չնայած հարթալիին մոմենտի առկայությանը (զգեստների և իրերի պատկերման ժամանակ), Ուայլի հեքիաթների նկարազարդումները արտահայտված են ձեի և բովանդակության լրիվ ռեալիստական միասնականությամբ։

Վարդգես Սուրենյանցի ձեռագրերում հանդիպում ենք բազմաթիվ նմուշների, որոնցից պարզ է դառնում, թե որքան խոշոր տեղ է հատկացրել նա գրքի նկարազարդման արվեստին, ինչպես լուրջ է տևումնասիրել յուրաքանչյուր գրական ստեղծագործության ամեն մի տողը։ Նրա համար գրքի նկարազարդումը՝ արվեստը ժողովրդի մեջ տարածելու ամենադեմոկրատական ձևերից մեկն է եղել։

Խոր կերպով ուսումնասիրելով տվյալ երկի բովանդակությունը, շեշտելով նրա կարևոր, առաջադիմական կողմերը, բացահայտելով հերոսների սոցիալական և հոգեբանական կերպարը, արտահայտելով տվյալ երկի ազգային և պատմական յուրահատկությունը Վ. Սուրենյանցը բազմաթիվ գրքերի իր նկարազարդումներով նպաստել է այդ բնագավառի զարգացման ու հարստացմանը հայ կերպարվեստում։



## ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՂԱՐԴԻՉ

Վարդես Սուրենյանցի ստեղծագործական կյանքի կարևոր բնագավառներից է թատերական նկարչությունը:

Գ. Սուրենյանցի առաջին դեկորացիոն աշխատանքը կապված է 1894 թ. Մոսկվայում բացված ոռւս նկարիչների առաջին համագումարի կազմակերպման հետ, որի ժամանակ համագումարի շենքի միջանցքներն ու սրահները դեկորատիվ պանդոկներով գարուարելու նպատակով ներգրավվում են մի շարք նկարիչներ «Արվեստը սիրողների ընկերությունից»:

Համագումարի գեղարվեստական ձևավորման մասին տշշագրավ տեղեկություն է պահպանվել նկարիչ Ե. Թադևոսյանի հիշողություններնամ. «Այդ տոնակատարության աշխատանքներին «Արվեստը սիրողների ընկերությունից» ընդգրկված էին շատ նկարիչներ: Ազնվական ժողովարանի ֆոյեում ցուցադրված էին Կորովինի, Դոսեկինի, Սուրենյանցի, Արենսկու «Բաֆայել», Պաստեռնակի, Սավիցկու և Կասատկինի այլ պիեսների համար կատարված բոլոր դեկորատիվ պանդոկները»:

Այդ տոնակատարությանը մասնակցել են մի շարք ոռւս նկարիչներ, իսկ կենտրոնական դահլիճի կողքի սրահներում դրված են եղել Կ. Ա. Կորովինի «Ղրիմ», Ն. Վ. Դոսեկինի «Գիշեր» և Վ. Սուրենյանցի «Հեռավոր արեվելք» գեղարվեստական պանդոկները:

Հետագայում Վ. Սուրենյանցի կատարած ձևավորումների մասին պահպանվել են գրավոր տեղեկություններ Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի նամակներում, ինչպես նաև բազմաթիվ հիշատակումներ իրեն՝ նկարչի նամակներում և նրա մասին եղած հոդվածներում, որոնցից պարզվում է, որ Վ. Սուրենյանցը Պետերբուրգի Մարինսկի թատրոնում ձևավորել է «Շովահննը» բալետը և Ա. Ռուբինշտեյնի «Դևա» օպերան: 1901 թ. մայիսին Վ. Սուրենյանցը Բաքվից գրում է Ալ. Շատուրյանին: «Եթե Պետերբուրգի կայսերական թատրոնի զակազը լիներ, վիճակս վատ էր— այնտեղից նամակ ստացա, որով ինձ հրավիրում են Գեմոնի բոլոր հինգ գործողությունները հանձն առնել նկարելու այս ամառվա ընթացքում: Պատասխանը հեռագործ տվի, թե համաձայն եմ, մայիսի վերջին կգամ— գոնեկովկասում էտյուններ կանեմ և նյութեր կժողովեմ, դրանից լավ բա՞ն»:

Նույն թվականի նոյեմբերի 4-ին Վ. Սուրենյանցը գրում է Մկրտիչ Բարխոսդարյանին Պետերբուրգից: «...Բառի բուն նշանակությամբ գիշեր-ցերեկ աշխատում էի թատրոնում, որպեսզի գործս նշանակված օրը վերջանար (ժամանակը արագ մոտենում էր): Այժմ, վերջապես, այդ էլ եղավ, գործից շատ գոհ մնացին և վերջացրի ուղիղ նշանակված օրը»:

Պետերբուրգում Վ. Սուրենյանցը որոշ աշխատանք է տանում նաև Վ. Կոմիսարժեսկայայի անվան թատրոնում, իրականացնելով նորվեգական դրամատուրգ Հովնար Հեյրորդի «Սիրո ողբերգությունը» պիեսի բեմադրության ձևավորումը, որի պրեմիերան տեղի է ունենում 1907 թ. հունվարի 8-ին:

Վ. Սուրենյանցը 90-ական թ. կազմակերպության համար ձեմարել է բազմաթիվ ուսանողականն ներկայացումների ձևավորումներ և կենդանի պատկերներ՝ Մոսկվայում կազմակերպվող հայկական բարեգործական երեկությունների համար: Այդ մասին իր հիշողություններում պատմում է Հայկական ՍՍՌ Արվեստի վաստակավոր գործիչ, նկարիչ Վ. Մ. Գայֆենյանը, որն այդ տարիներին՝ 1890—1901 թթ., կազմակերպ էր: Ըստ բանավոր տեղեկությունների Վ. Սուրենյանցը ձևավորել է նաև մեկ բեմադրություն Կ. Ստանիսլավսկու կազմակերպած «1905 թվականի ստուդիաբամ», Մոսկվայի Մեծ թատրոնում, ինչպես նաև մի շարք ներկայացումներ՝ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում: Սակայն դրանց մեծ մասը մեղ չասել:

Մ. Գորկու անվան Մոսկվայի Գեղարվեստական Ակադեմիկ թատրոնի թանգարանում պահպանվել են միայն Վ. Սուրենյանցի մակետներն այդ թատրոնում բեմադրված Մորիս Մետեռինի «Կուրերը», «Այնտեղ

Ներսում», «Անկոշը», ինչպես նաև Ա. Պ. Զեխովի «Ճայլը» պիեսների վերաբեմադրման համար:

Կ. Ս. Ստանիսլավսկին հեղաշրջելով թատերական արվեստի ողջ սիստեմը, նոր խնդիրներ դրեց նաև թատերական նկարիչների առաջ, նրանցից պահանջելով, որ նրանք ևս որոշ շափով լինեն ոեժիսոր: Դա նշանակում էր, որ թատերական նկարիչը ներկայացման արտաքին կերպարի փնտրումների ժամանակ պետք է ելնի պիեսի ներքին բովանդակությունները, համամիտ լինի բեմադրողի գեղարվեստական մտահղացումներին և կանգնած լինի իր ժամանակի առաջավոր գաղափարների մակարդակի վրա: Դա նշանակում էր, որ թատերական գեկորները պետք է դադարեին դերասանի հետևում ֆոն լինելուց, մտնեին բեմադրության գործողության մեջ և օգնեին պիեսի դրամատիկական բովանդակության բացահայտմանը:

Կ. Ս. Ստանիսլավսկին և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն Վ. Սուրենյանցի թատերական աշխատանքներին արդեն ժանոթ էին Մարինսկի թատրոնում, աշխատանքներ, որոնք անկասկած դրական կարծիք էին ստեղծել նրանց հեղինակի նկարչական մեծ ուսակությունների մասին, իսկ 1904 թ. լույս տեսած Մ. Մետեռինկի երեք պիեսները՝ Վ. Սուրենյանցի նկարազարդումներով, կայում հող ստեղծեցին նրան Մոսկվայի Գեղարվեստական թատրոն հրավիրելու այդ նույն պիեսների ձևավորման համար: Այդ ներկայացումների ոեժիսորներն էին Կ. Ս. Ստանիսլավսկին, Գ. Ս. Բուրգալովը և Ն. Գ. Ալեքսանդրովը:

1904 թ. մայիսի 12-ին Կ. Ս. Ստանիսլավսկու ոեժիսորական պարտիտուրայի վերջնական օրինակն արդեն ավարտված էր: Մոտ երկու ամսվա ընթացքում, մինչև առաջին փորձնական բեմադրությունը (օգոստոսի 1-ը), Վ. Սուրենյանցը կատարում է բազմաթիվ էսքիզներ, մակետներ, որոնք ներկայացնում է բեմադրողներին: Կ. Ս. Ստանիսլավսկին, ըստ սովորության, հավաքում էր այդ ամենն իր մոտ և նախապատրաստական աշխատանքն ավատելուց հետո կուտակված նյութից ընտրում վերջնական օրինակները:

Մ. Մետեռինկի պիեսների համար կատարած Վ. Սուրենյանցի մակետներից պահպանվել են վեց աշխատանք:

Ա. Պ. Զեխովը, որը մինչև 1904 թ. մայիսի 14-ը Մոսկվայում էր, Կ. Ս. Ստանիսլավսկու վկայությամբ անընդհատ լինում էր Գեղարվեստական թատրոնում և հատկապես հետաքրքրվում Մետեռինկի պիեսներով: Անկասկած, այդ օրերին Վ. Սուրենյանցը հնարավորություն է ունեցել անձամբ ծանոթանալու Ա. Պ. Զեխովի հետ:

Մետեղինկի պիեսների Ստանիսլավսկու պարտիտուրայում «Կույրերի» արտաքին ձևագործման մասին կարդում ենք.

«Հանգժողությունը դաշտին լուսը և բնմի վրա և բոլոր կրակները. երաժշտությունը լրիդի մթության մեջ... Քանի նվագում է (5 րոպե)՝ վարագույրը լուս և անտեսանելի բացված է... Դեկորները պատկերացնում են՝ սարի վրա հողը թափվել է, առաջացել է փլվածք. քարերը, հողը, ճյուղերը, արմատները, ամենը հայտնվել են մի ընդհանուր քառոսում: Անդունդի վրա կախվել է հող, որը պահպատճեց է աճող, դարավոր անտառի արմատներով, երեսում են միայն ծառերի բները և ամեն տեսակ ձևերի կեռ արմատները. բները ֆանտաստիկ հաստության են: Հեռվում երևում է ծովը՝ մութ, չարագույժ, ժամատան աշտարակի հետ հին տան վերաբերյալ: Դա կույրերի օթևանն է. հեռվում, ծովի մեջ երևում է փարոսը (գիտության, կուլտուրայի սիմվոլը):

Վ. Սուրենյանցի կողմից ներկայացված «Կույրերը» պիեսի ձևագործման երեք մակետները համապատասխանում են Ստանիսլավսկու վերոհիշյալ բնորոշմանը:

...Մոռալ, խիտ անտառ է. ամեն ինչ խառնվել է իրար: Հողը, քարերը, ծառերը ֆանտաստիկ կերպարանք ունեն և թվում է ամեն ինչ խեղդվում է այդ քառուի մեջ:

Երկրորդ տարրերակում, որը կատարմամբ ավելի թույլ է, ավելի հանգստություն, որոշակիություն կա: Սակայն հատկապես ուշագրավ է 3-րդ՝ վերջնական տարրերակը:

...Խորհրդավոր հանգստություն է տիրուամ, որին թվում է, թե նախորդել է ողջ տիեզերքի քառոսային վիճակը: Ե՛վ՝ դեպի վեր խոյացող միանման ծառերը, որոնց կատարմերը չեն երևում, և անկարգ թափված քարերը, որոնց հետ ձուլվելու էին գործողության մասնակից կույրերը, և՝ հեռալում երևացող մատուի սիրությը՝ դրանք սիմվոլներ են, որոնք մարմնավորում են միաժամանակ լրացնում են մետեղինկյան մարդկային ոգիներին:

Ալդ երեք պիեսների ձևագործումներից ամենահաջողն անկասկած եղել է «Կույրերի» ձևագործումը: «Այնտեղ ներսում» և «Անկողյա» պիեսների ձևագործումներում Սուրենյանցը համարյա թե կրկնում է հեղինակի ուժմարկները, սակայն անկարգած բեմադրության ժամանակ խոշոր դեր են խաղացել նկարչական և ուժիւորական հաշող էֆեկտները: Օրինակ՝ լուսամուտից երևացող, իրար ձեռք բռնած երեք քույրերի սիլուետները («Այնտեղ ներսում»), հոլանդական ժամանակակից միալար լինչները, մանգաղի զրնդուրը, որը սիմվոլացնում էր մահը («Անկողյա»)՝ այլն:

Մորիս Մետեղինկի մինիատյուրների բեմադրությունը (առաջին ներ-

կայացումը տեղի է ունեցել 1904 թ. հոկտեմբերի 2-ին) մաս աղմուկ է առաջացնում գեղարվեստական շրջաններում: «Հանդիսականների դահլիճը» ամբողջովին լիքն էր: Վերջանալուց հետո բեմ էին դուրս գալիս պ. Ստանիսլավսկին և դեկորացիաները նկարող պ. Սուրենյանցը», — գրում է թերթից մեկը:

Մոսկվայի գեղարվեստական թատրոնի 7-րդ թատերաշրջանի՝ 1904—1905 թթ., բեմադրություններից աշխատական այնքան գրախոսական չի գրվել, որքան Մետեռվինկի այդ երեք փոքրիկ պիեսների մասին:

Բոլոր դեպքերում էլ բեմադրությունները համարելով անհաջող, այնքանով տրամադրությունների և Գորկու ռեալիստական դրամատուրգիայի սկզբունքների վրա կառուցված թատրոնում անհամատեղելի էր Մետեռվինկի սիմվոլիկան, գրախոսները անխտիր մեծ տեղ են հատկացնում բեմադրությունը ձևավորող նկարչի գեղեցիկ և շնորհալի աշխատանքին, գոտինելով, որ այն լրիվ համապատասխանում է Մետեռվինկի դրամատուրգիայի ոգուն: «Բայց դա ի վերջո գեղեցկություն էր: Զե՞ս որ ամեն մի տեսարանից կարելի էր թեկուզ նկարել պատկեր: Այդպիսի դեկորներ՝ գիգանտ ծառեր մերկ բներով, ինչպիսին «Կույրերում» էր, ես չեմ տեսել մեր բեմերի վրա: Այդ դեկորներից վշտում էր և՛ ճշմարտությամբ և՛ ինչ-որ Բյոկլինով, իսկ երբ քամու հոսանքը ճոճում էր հազիկ նշանավոր հուժկու բները, թվում էր, թե ճոճում էին իսկական ժառեր», — գրում է գրախոսող Գրագոլը:

Մ. Մետեռվինկի պիեսներից հետո Վ. Սուրենյանցը Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի համար ձևավորում է Պ. Մ. Յարցևի «Վանքի մոտ» 3 գործողությամբ դրաման, որի պրեմիերան տեղի է ունենում 1904 թ. դեկտեմբերին: Այդ մասին 1904 թ. հունիսի 13-ին Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչներուն գրում է Կ. Ս. Ստանիսլավսկուն: «Ես դիտեցի «Վանքի մոտի» դեկորները, Վատ չի ստացվի: Նրանք համարյա պատրաստ են: Սուրենյանցին հասկացաւ»:

Հայաստանի Պետական Պատկերասրահում պահպանվում է երեք կտորից բաղկացած մի էսքիզ, որը պատկերում է հայկական գյուղաքաղաքի հարուստ տան շքամուտք, վերևում երևացող պատշգամբով: Բակի քարաշեն պարուսի վերևից, կենտրոնական մասում, երևում է ըլրի ստորոտին թառած հայկական եկեղեցին, իրեն կից բնակելի շենքերով: Ազից, մինչև ձախ կողմում՝ երևացող պատշգամբը հասնող ծառերի ճյուղերի միջից երևում է լազուր երկինքը: Այդ էսքիզները կատարված են Պ. Մ. Յարցևի «Վանքի մոտ» պիեսի բեմադրման համար:

Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում կատարած Մետեռվինկի

պիեմների ձևավորման հաջողությունը հիմք է հանդիսանում, որպեսզի  
Կ. Ս. Ստանիսլավսկին և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն Վ. Սուրբնյանցին  
1905 թ. հրավիրեն Ա. Պ. Զեխովի «Ճայի» վերաբեմադրվող ներկայացման  
ձևավորումները կատարելու:


Հստ Ա. Զեխովի «Ճայի» առաջին և երկրորդ գործողությունները կա-  
տարվում են Սորինի կալվածքի պարկում: Առաջին գործողության ժամա-  
նակ արևամբետ է. լինը ժածկվում է տնային ներկայացման համար պատ-  
րաստված բեմով, դեպի որը հանդիսականներից գնում է մեծ ժառուղի:  
Երկրորդ գործողությունը կատարվում է նույն պարկի ավելի խորքում:  
Զախում երևում է լինը, ուր արտացոլվում է արևը: Հստ բեմադրող ուժի-  
ուրներ Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի մտահղաց-  
ման, առաջին և երկրորդ գործողությունները պետք է ընթանային նույն  
վայրում, որի համար նրանք մի շարք անգամներ դիմում են Զեխովին,  
Յալթա՝ թուլլավություն ստանալու համար:

Բեմադրողները մեծ ուշադրություն են նվիրում ներկայացման արտա-  
րին ձևավորմանը, որը պետք է օգներ բեմադրության ներքին էության ար-  
տահայտմանը, «Ճայի» առաջին բեմադրության ժամանակ, 1898 թ. այն  
ձևավորող թատրոնի գլխավոր նկարիչ Վ. Ա. Սիմովին չի հաջողվում գլու-  
նել հատկապես առաջին գործողության տրամադրությունը, որը կօգներ  
ուժիսորական միջանսցենների առավել արտահայտչականությանը: Թե՛  
նկարիչը և թե՛ բեմադրողները գո՞յ չեն մնում առաջին գործողության ձևա-  
վորումից:

Վ. Ա. Սիմովի ձևավորումը «Ճայի» առաջին գործողության մեջ, որտեղ  
Նինա Զարեխնայան արտասանում է իր մենախոսությունը, չէր համապա-  
տասխանում տվյալ տեսարանի բովանդակությանը: Տարվելով դեկորների  
պլանիրովկայով, Վ. Ա. Սիմովը չկարողացավ արտահայտել բնության շե-  
խովյան ընկալման էությունը և բացել գործողության հոգեբանական լար-  
վածությունը, ինչպես նաև այն հստակությունն ու պարզությունը, որը հա-  
տուկ է Ա. Զեխովի պիեմներին:

1905 թ. Գեղարվեստական թատրոնն իր ստեղծագործական մտորում-  
ների ժամանակ վերաբեմադրում է «Ճայը»: Վերանայվում են միջանսցեն-  
ները, փոփոխումներ են տեղի ունենում կատարողական կազմում, իսկ  
ձևավորումը հանձնարարվում է Վարդգես Սուրբնյանցին: Ա. Պ. Զեխովի  
մոտ կարևոր բովանդակության տրամադրությունն էր, և ահա Սուրբնյան-  
ցի նուրբ տոներով կառուցված մեղմ կոլորիտը համապատասխանում էր  
«Ճայի» բեմական իրականացմանը:

Թատերական նկարչության բնագավառում Վ. Սուրենյանցը ֆիքսացիայի շենթարկեց դրամատուրգի թելադրած բեմադրության արտաքինը, կապվելով Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի կուեկտիվի հետ, նա կարողացավ ընկալել այն նորը, որը ներմուծվեց թատերական արվեստի բնագավառը այդ տաղանդավոր կուեկտիվի կողմից, և դառնալով յուրօրինակ ռեժիսոր՝ բացահայտեց ողջ բեմադրության ներքին էությունը, ստեղծելով բեմադրության ռեալիստական կերպար:



## ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ՏԵՍԱԲԱՆ

Վարդգես Սուրբնյանցի թղթերում պահպանված սուզ տեղեկություններից պարզ է դառնում, որ նա իր ողջ կյանքում մեծ հակում և սեր է ունեցել գեղի ճարտարապետությունը:

1906 թ. մայիսի 5-ին, Ալ. Շատրույանին հասցեագրված իր նամակներից մեկում, Վ. Սուրբնյանցը գրում է. «Եկեղեցու նախագիծը արդեն պատրաստ է: Այսօր տարեկ էի Պոլենովին ցույց տալու, էգուց էլ Թիկովսկու պիտի ցուց տամ ու իսկուն ուղարկեմ»:

Մեր պրատումներն այդ ուղղությամբ ոչ մի արդյունք չտվին, և թե՛ եկեղեցու նախագծի, թե՛ նրա կառուցման մասին ոչ մի տեղեկություն հնարավոր շեղավ ստանալ: Մոսկվայի Վագանիկովյան գերեզմանատան հայկական մասում, մուտքից դեպի ձախ, իրար կողքի կառուցված են երկու մատուռ. մեկը՝ Գևորգ Քանանյանի, մյուսը՝ Միհանսարովյայի գերեզմանի վրա: Այդ մատուռների կառուցումները վերագրվում են Սուրբնյանցին, սակայն այդ բանավոր կարծիքը հաստատող ոչ մի փաստ գարձյալ հնարավոր շեղավ գտնել: Եթե այդքան սակավ են մեզ հապաժ Սուրբնյանցի ճարտարապետական գործերը, ապա նշանակալից է նրա ժառանգությունը որպես ճարտարապետության տեսաբանի:

Հայ ճարտարապետության պատմական զանագան կոթողների մասին հետաքրքիր տեղեկությունների ենք հանդիպում XIX դարի հայկական մամուլում, սակայն այդ հոդվածներում հոդվածագիր-վանականները սահմանափակվում են տվյալ կոթողն այս կամ այն կաթողիկոսի անվան հետ կապելով, իսկ լավագույն դեպքում վերծանելով եղած մակագրությունները:

Ահա այդպիսի պայմաններում ճարտարապետությանը նվիրված իր հոդվածներով հանդես է գալիս Վարդգես Սուրենյանցը:

Մեզ համած նրա ձեռագիր, ինչպես նաև տպագիր հոդվածները, որոնց թիվը հասնում է 8-ի, աշքի են ընկնում իրենց ինքնուրույնությամբ, հեղինակի կողմից նյութի անառարկելի տիրապետումով, համապատասխան գրականության խոր տառամեասիրությամբ և հատկապես դարերի ընթացքում իր ժողովրդի ստեղծած գեղարվեստական կոթողների հանդեպ տաճացած անսահման սիրում: Վ. Սուրենյանցը նրանց դուրս է բերում ազգային նեղ սահմաններից և ձգտում է ցույց տալ հայկական ճարտարապետության տեղը մյուս ժողովրդների գեղարվեստի պատմության մեջ:


Վ. Սուրենյանցի առաջին հոդվածը տպագրված է 1883 թ. «Մեղու Հայաստանի» հանդետում «Մի քանի խոսք հայկական ճարտարապետության մասին» վերտառությամբ, 23-ամյա պատանին, եխելով հայկական ճարտարապետության մասին եղած եվրոպական ուսումնասիրողների աշխատությաններից, արդեն կարողանում է կողմորոշվել և գրում է, որ «այս բոլորը միասին ոչ միայն չեն ծանոթացնում, այլև սխալ գաղափար են տալիս հայկական արվեստի մասին»: Քննադատելով օտար տեսաբանների աշխատություններում եղած ճիշա թեզերը հայ ճարտարապետության մասին, Վ. Սուրենյանցը առաջ է քաշում հայկական ճարտարապետության ինքնուրույնության հարցը:

Վ. Սուրենյանցի երկրորդ հոդվածը՝ «Նամակ խմբագրությանը» վերագրով տպագրված՝ 1899 թ. «Մշակի» № 200-ում, որի համար առիթ է հանդիսացել նույն «Մշակի» № 187-ում տպագրված «Մի հետաքրքրական հարց» վերնագիրը կրող հոդվածը:

Այդ երկու, ծավալով համեմատաբար փոքր, հոդվածներից հետո Վ. Սուրենյանցը հենվելով իր ճանապարհորդությունների ժամանակ կատարած հայկական կոթողների ուսումնասիրությունների վրա (Եջմիածին, Անի, Սևան և այլն) 1901 թ. գրում է իր խոշոր աշխատանքներից մեկը՝ «Հայկական ճարտարապետության տեղը գեղարվեստի պատմության մեջ», որը տպագրում է Վրթանես Փափազյանի խմբագրությամբ հրատարակվող «Վտակ» հոդումահուում:



Ոտնակախ արված սրբություն. 1895 թ.



Այս հոդվածում Վ. Սուրենյանցն առաջ է քաշում այն թեղը, որ գեղարվեստը ամեն մի երկրի պատմական տվյալ շրջանի արտահայտությունն է: Նա պատմական տվյալ ժամանակաշրջանի հետ միասին սաղմնային վիճակում զարգանում է նախորդ պատմական շրջանի մեջ, և երբ նպաստավոր սկայմաններ են ստեղծվում, «...երեան է գալիս գեղարվեստի այն ճյուղը, որ աղջի ոփուն և ժամանակի պահանջին ավելի է համապատասխան... Այդ ընթացքն է ունեցել նաև հունական և հոռմեական կլասիկ փարթամ գեղարվեստը. ժամանակը համելուն պես սկսել է իջնել իր բարձրությունից — էլ տեղ չկար բարձրանալու, որովհետև նոր կյանքի, նոր օրենքների ուրվագծերը սկսեցին երեալ մարդկային մտքերի և սրտերի մեջ»:

Բարձր գնահատելով հայ ժողովորդի ստեղծած, դարերի ընթացքում պատմության հողմերին դիմադրած ճարտարապետական կոթողները, Վ. Սուրենյանցը իր մեկ այլ հոդվածում նշում է, որ ամեն մի մասնագետ ձեռնամուխ լինելով որևէ նոր կառուցման, պարտավոր է շամենանուրբ կերպով ուսումնասիրել հայ ճարտարապետության բոլոր շրջանները, որովհետև «...հայկական ճարտարապետությունը գոյություն է ունեցել անթիվ դարերի ընթացքում, և ինչպես գեղարվեստը ամենայն տեղ, ունեցել է իր ծաղկման և անկման շրջանները»: Սակայն Վ. Սուրենյանցը հայկական ճարտարապետությունը չի սահմանափակում ազգային կուլտուրայի նեղ շրջաններով, այլ այն համարելով խոշոր ներդրում համաշխարհային կուլտուրայի պատմության գանձարանում, այն դիտում է որպես մյուս ժողովությունների կուլտուրայի ժառանգության մի օլակ:

1903 թ. «Մշակի» համարներում նկարիչ Ա. Ֆեթվաճյանը տպագրում է «Գեղարվեստը՝ հայերի մեջ» հոդվածաշարքը, որտեղ առաջ է քաշում այն միտքը, որ «հայի բնության հատկանիշն է նմանվել ուրիշին և ենթարկվել... նա մի հող է, որի վրա կարելի է աճեցնել ամեն ճաշակ ու բարքեր...», ապա գտնում է, որ հայկական ճարտարապետության ոճը եկվոր է, որ նակրել է հելլենա-լատինական, բյուզանդական և ապա արաբական ճարտարապետությունների ոճական ազդեցությունները:

Այդ հոդվածները մեծ հուզում են առաջացնում հայ ինտելիգենցիայի շրջաններում: Պատասխաններով Ալ. Մատուրյանի այդ առթիվ գրած նամակին, 1903 թ. հովհան 15-ին, Վ. Սուրենյանցը գրում է. «Նրա (Ֆեթվաճյանի — Մ. Դ.) այդպիսի արագ արած եղրակացությունները և այդպես շուտով կարգացած վճիռը այնպիսի ժամանակաշրջանում թողեց վերաս, որ չհամբերեցի և նույն «Մշակին» մի այլ հոդվածով գրեցի ի պաշտպանությունն հայկական գեղարվեստի, և իրավ, տրաքվելու բան չէ» — առանց հիմնովին ուսում-

նասիրելու, առանց իրեն հաշիվ տալու, թե գեղարվեստն ընդհանրապես ի՞նչ է — մերը կապիկություն է անվանում, բերելով իր տեսած թանգարանների կոտր ու քրթված օրինակները...»:

Ահա այդ հոգվածում, որը տպագրվում է «Մշակի» 1903 թ. № 176-ում «Գեղարվեստի նորագույն հոսանքները և հայկական ճարտարապետությունը վերնագրի տակ», Վ. Սուրենյանցը սեղմ բնորոշելով գեղարվեստի պատմական շրջանները (Ասորեստան, Պարսկաստան, Հունաստան, Հռոմ, Վերածնունդ, ինչպես նաև նորագույն շրջանները) հանդում է այն եղուակացության, որ «Գեղարվեստի կրակն ամենահին դարերից սկսած անշեշ է մընամ մինչև մեր օրերը, անցնելով ազգից ազգ, դարից դար, մերթ բարձրանալով, մերթ ընկնելով, ժիլ է տվել և ծաղկել է այն երկրում, որտեղ հողը նրա համար նպաստավոր է եղել»:

Հակաճառելով Ֆեթվաճյանի արվեստի «Եկվորության» թեղին, Վ. Սուրենյանցը առաջ է քաշում նաև արվեստի փոխադարձ ազդեցությունների հարցը: Վ. Սուրենյանցը շի ժմտում հարման երկրների արվեստների միջև եղած փոխազդեցությունները և ընդունելով բյուզանդական ոճի մուտքը Հայաստան, գտնում է, որ նա ձովվեց տեղական տարրերի հետ. «Երկրի բնավորությունը և ազգի հոգեկան առանձնահատկությունները տիրապետեցին [այդ] ոճին այն աստիճանի, որ... ոժվար է մտածել մի ոճ այդ աստիճան համապատասխան հայի բնությանը և նրա բնակած երկրի աշխարհագրական դիրքին: Հայկական եկեղեցական ճարտարապետության կատարյալ տիպարը Վ. Սուրենյանցի համար՝ Հռիփսիմեի եկեղեցին է, որն իր յուրօրինակությամբ, ձևերի համաշխափությամբ, կոմպոզիցիայի պարզությամբ, նրա բոլոր հոգվածներում էլ արժանանում է մեծ հիացմունքի: Ապա հեղինակը հարց է տալիս. «...ամոթ վիճին հարցնելը՝ ի՞նչ է բյուզանդական կոչված տճր: Դա միանգամայն արևելքում գտած ոճ է... Ո՞վ գիտե, կարելի է մեր երկրում այնքան էլ նոր չէին նրա տարրերը»:

Վ. Սուրենյանցը ճարտարապետության հետ կապում է նաև հայկական քանդակագործության զարգացման հարցը և գտնում է, որ հայկական քանդակագործության, որպես արվեստի առանձին ճյուղի զարգացման համար պատմական պայմանները վերին աստիճանի աննպամտ են եղել: Նա իր ինքնուրույն զարգացումը շի տանեցել և միշտ կապված է եղել ճարտարապետության հետ: Սուրենյանցը հասկապես հիացմունքով է խոսում հայկական տաճարների արտաքին քանդակների մասին, որոնք նույր ժամանակների պատուհանների վրայում են սյուները իրար հետ, անցնում կամարների, դուռների, պատուհանների վրայում, հյուսվում են, կազմում զանազան ձևել

դարդաբանդակներ։ Նա իր գայլութով լի խոսքն է ուղղում Ա. Ֆեթվաճյանին, նրա արած շտապ նզրակացությունների համար, գտնում է, որ նրա մտքերը կտրված են իր ժողովրդի պատմությունից, նրա կուտուրական հարստությունների առեղջման պայմաններից և նախատում է նրան ազգային արժանապատվության զգացման բացակայության համար։

Վ. Սուրենյանցի տեսական ժառանգության մեջ նշանակալից տեղ են դրավում այն հոգվածները, որոնք նվիրված են էջմիածնի մայր տաճարի վերաշինության հարցերին, տաճար, որը նրա համար ոչ թե քրիստոնեական օշախ էր, այլ ինչպես ինքն է գրում, «գեղարվեստական երկամիրություն»։

Մեզ են հասել Վ. Սուրենյանցի՝ «Դարձյալ էջմիածնի վերաշինության մասին» հոգվածը, տպագրված «Մուլիք» 1909 թ. № 88-ում, երկու ձեռագիր հոգվածներ՝ «Ա. էջմիածնի վերաշինության հարցը» հայերեն, գրված Խրիմյան կաթողիկոսի ժամանակ, Երկրորդը՝ ուստեղն է և կարդացվել է 1912 թ. Սոսկվարտմ բացված ուստա նկարիների երկրորդ համարում։ Մեզ է հասել նաև Սուրենյանցի կողմից Մատթեոս 2-րդ կաթողիկոսին ուղղած «Յաղագ» վերանորոգութեան տաճարի սր. էջմիածնոյց վերտառությունը կրող զեկուցագիրը։

Վ. Սուրենյանցը խիստ քննադատության ենթարկելով ճարտարապետ Շահերնի նախագիրը, ըստ որի էջմիածնի արտաքին մասերը ի մի պետք էր բերել և զարդարել Անիի Խ դարի քանդակներով, գտնում է, որ պետք է պաշտպանել շենքի ոճը, պահպանել ավելի ուշ շինված հավելվածները՝ զանգակատունը, իշման տեղը, թանգարանը, խորաններն ու սեղանները, որոնք զարդարում են տաճարը և նրա երկարամյա պատմությունը վկայագրող հիշատակարաններ են։ Նա մեծ սխալ է համարում տաճարի արտաքին և ներքին ձեւերին ձեռք տալու Պետք է չնկատվի, որ նրան մարդու ձեռք է դիպել, որովհետև «ճարտարապետական երկասիրության գեղեցկությունը կախված է, մնատարակույս, նրա առանձին մասերի փոխադարձ հարաբերությունից» ճարտարապետության հոգին, նորա ներդաշնակ ամբողջությունն է։ ...Ճարտարապետական երկասիրությունը մի ոտանակվոր է և կամ շարական և նորաշիքը խախտել ու վանկերի թիվը փոխել մի վարպետի քիմքով— չի կարելի»,

Վ. Սուրենյանցը միևնույն ժամանակ առաջ է քաշում մեկ հիմնական հարց, որ ինքը կընդունի տաճարի վերաշինությանը մասնակցերու առաջարկը, սակայն իր առաջադրած նկարների էսքիզները և գծադրերը պետք է քննարկման դրվեն խոշոր քաղաքներում։ Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում, Մլում խենում և Փարիզում, որպեսզի համապատասխան մաս-

նագետներ հնարավորություն ունենան ծանոթանալու նրանց հետ և հայտնենց կարծիքը՝ օգնած լինելով գործին:

Վ. Սուրենյանցը դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին, հիմնվելով հայ ժողովրդի կողմից դարերի ընթացքում ստեղծված ճարտարապետական կոթողների վրա, կարողացավ կանգնել տեսական ճիշտ ուղղով, առաջ քաշելով այն միտքը, որ յուրաքանչյուր ժողովրդի ստեղծագործական ժառանգության հարցը քննելիս անհրաժեշտ է առաջին հերթին նկատի ունենալ այն պատմական, քաղաքական և հասարակական պայմանները, որոնք ծնունդ են տվել տվյալ ժողովրդի հոգևոր հարստություններին:



Վ. Սուրենյանցի տեսական ժառանգության մեջ հետաքրքիր են նաև այն հոգվածներն ու զեկուցումները, որոնք նախրված են կերպարվեստի զանազան հարցերին:

1883 թ. Մյունիստում բացվում է համաշխարհային գեղարվեստական ցուցահանդես, որը հետաքրքիր է եղել թե իր մեծությամբ (90 դահլիճ, 3000 գեղանկարչական աշխատանք) և թե իր որակով: Վ. Սուրենյանցն այդ առթիվ հոգված է գրում «Մի քանի խոսք եվրոպական նկարության մասին» վերնագրով, որը տպագրվում է 1883 թ. «Արձագանքի» № 40-ում, Դա Սուրենյանցի անդրանիկ հոգվածն է, որ նա տպագրում է մամուլում և, անկասկած, որպես առաջին աշխատանք պատիվ է բերում երիտասարդ հեղինակին:

Նախքան ցուցահանդեսի բաժինների նկարագրումը Վ. Սուրենյանցը մի թերթ պատմական ակնարկ է գցում արվեստի անցած ուղղու վրա, ապա նոր միայն անդրադառնում է ցուցահանդեսի վերուժմանը:

Նա դրական է համարում այն, որ ժամանակակից նկարիչների զգայի մասի նպատակն է դարձել պատկերել «բնությունը իր թերություններով» և արժանավորություններով, ապա ավելացնում է. «և իրավ, մի՞թե քնության թերությունները նորա արժանավորությանց հետ մի գեղեցիկ ներդաշնակություն չեն կազմում»:


1890 թվականին նշանակվելով էջմիածնի Գևորգյան ճեմարանի նկարչության դասաւու, միևնույն ժամանակ Վ. Սուրենյանցը մտանձնում է «Արվեստի պատմություն» առարկայի դասավանդումը:

Նույն թվականի փետրվարի 27-ին, ուսուցչական խորհրդի հերթական

նիստում, քննարկվում և հաստատվում է նրա ներկայացրած արվեստի պատմության ծրագիրը: Պահպանվել է այս ծրագրի ներածությունը միայն:

Այդ առարկայի գծով հայ իրականության մեջ չունենալով իր նախորդը վ. Սուրենյանցը ինքնուրույն կազմում է արվեստի պատմության վերաբերյալ ծրագիր, նպատակ ունենալով մատաղ սերնդին բազմակողմանիորեն ծանոթացնել կերպարվեստի, նրա դերի և նշանակության հետ:

Վ. Սուրենյանցի վերոհիշյալ հոգվածները իրենց բազմակողմանի հարցադրումներով նշանակալից ներդրում են XX դարի սկզբի հայ կերպարվեստագիտության պատմության մեջ:



## ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԹԱՐԴՄԱՆԻՉ

